



ՄԱՅՐ ԱՅՐԱՅԻՆ ՍՈՒՐԲ ԷԶՍԻԱՃՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

15 հուլիսի **ՀԱՊՀ-ի ուսանողական խորհրդի անդամներին**

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Շայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հյուրընկալեց Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ուսանողական խորհրդի անդամներին:

Խորհրդի նախագահ Գեորգ Զարոբյանը, իր որդիական խոնարհումը բերելով Ամենայն Հայոց Կաթողիկոսին, շնորհա-

Անդրադառնալով մասնավորապես արձակուրդային շրջանում իրականացվելիք ծրագրերին՝ Հայոց Հովվապետը գովեց երիտասարդների հայրենասիրական ոգին, պատերազմում զոհված հայորդիների հիշատակը վառ պահելու իրենց նախանձախնդիր կեցվածքը՝ ընդգծելով, որ այդպիսի գիտակցությամբ առաջնորդվող սերունդը պիտի կարողանա իրականություն դարձնել մեր ժողովրդի իղծերը, կերտել հայրենիքի անվտանգ ու խաղաղ կյանքը:

Խոսելով արցախյան պատերազմի հետեւանքով հայ ժողովրդի կրած կորուստների մասին՝ Նորին Սրբությունը հորդորեց երիտասարդներին չվհատվել, մարտահրավերների առջեւ չհամարձակվել, այլ հետամուտ լինել իրենց ուսումնառությանը, իրենց գիտելիքներով եւ հմտություններով լծվել հայրենաշինության գործին՝ այդպիսով հավերժացնելով նաեւ իրենց զոհված դասընկերների հիշատակը եւ դառնալով քաջալերանքի ու հույսի աղբյուր՝ կորստյան դառնությունը ճաշակած բազում ընտանիքների համար:

Հայոց Հայրապետը երիտասարդներին պատգամեց փարված մնալ հայրենիքին, հայրենի հողին ու Սուրբ Եկեղեցուն, փարված մնալ ազգային ու հոգեւոր արժեքներին, որոնցով ազգը հայոց միշտ եղել է զորեղ ու միասնական եւ այդպիսին կլինի նաեւ ապագայում:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատասխանեց ուսանողներին հուզող հարցերին, որոնք հիմնականում վերաբերում էին արդի աշխարհի փոթորկալի իրողություններում եւ քաղաքական զարգացումներում քրիստոնյայի կերպարի պահպանությանը, հոգեւոր կյանքի փորձություններին, նաեւ կրոնական տարբեր կազմակերպությունների եւ հարանվանությունների վերաբերյալ Հայոց Եկեղեցու դիրքորոշմանը: Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունն ու բարեմաղթանքները փոխանցեց Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանին՝ վերստին կարեւորելով նման հանդիպումները:

Հանդիպումից հետո ՀԱՊՀ-ի ուսանողական խորհրդի անդամներն այցելեցին Վեհարանի թանգարան:



կալություն հայտնեց Մայր Աթոռի հարկի ներքո ՀԱՊՀ-ի սաներին ընդունելու համար, ապա անդրադարձավ ուսանողական խորհրդի գործունեությանը՝ մասնավորապես տեղեկացնելով, որ արցախյան պատերազմից հետո խորհուրդը փոխել է իր ռազմավարությունը եւ իրականացնում է նախատակների եւ վերավոր գինձառայողների ընտանիքների աջակցությանը եւ ուսանողների ռազմահայրենասիրական կրթությանն ուղղված ծրագրեր: Ուսանողական խորհրդի նախագահը մեծապես կարեւորեց խորհրդի առաքելության մեջ գործակցությունը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հետ:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ջերմորեն ողջունեց ուսանողներին՝ հայտնելով, որ նրանց այցը Մայր Աթոռ Հայոց Հովվապետի համար քաջալերանք է եւ բերկրանքի առիթ: ՀԱՊՀ-ի ուսանողական խորհրդի հետ Վեհափառ Հայրապետը հանդիպել էր նաեւ 2019 թվականի դեկտեմբերին:

20 հուլիսի **Եվրոպական խորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի անվտանգության, պաշտպանության եւ թափանցիկության խորհրդի նախագահին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Եվրոպական խորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի անվտանգության, պաշտպանության եւ թափանցիկության խորհրդի նախագահ Լուազոյին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ի դեմս տիկին Նատալի Լուազոյի, իր շնորհակալությունը հայտնեց Ֆրանսիայի իշխանություններին եւ բարեկամ ժողովրդին՝ մշտական ջերմ վերաբերմունքի, համակարակի ժամանակ, 44-օրյա պատերազմի ընթացքում եւ հետպատերազմյան շրջանում Հայաստանին եւ Արցախին ցուցաբերված զորակցության եւ աջակցության համար:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց արցախյան երկրորդ պատերազմի ծանր հետեւանքներին, Արցախի ժողովրդի եւ Հայաստանի առջեւ ծառացած մարտահրավերներին եւ անվտանգության խնդիրներին, Ադրբեջանի վերահսկողության տակ անցած տարածքներում Արցախի թեմի հոգեւոր ու պատմամշակութային ժառանգության նկատմամբ դրսեւորվող բարբարոսական վերաբերմունքին եւ հայկական սրբավայրերի պատկանելության կեղծման ձգտումներին: Խոսվեց առկա խնդիրների հաղթահարման ուղղությամբ ձեռնարկվող քայլերի, ինչպես նաեւ տեղահան-



ված արցախյան ընտանիքներին ի նպաստ Հայոց Եկեղեցու կողմից իրականացվող սոցիալական ծրագրերի մասին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը կարեւոր նկատեց միջազգային համրության հստակ կեցվածքի որդեգրումը եւ առավելագույն ջանքերի գործադրումը՝ կասեցնելու Ադրբեջանի սպառնալիքներն ու սադրիչ ոտնձգությունները ՀՀ սահմանների նկատմամբ, նպաստելու առկա խնդիրների շուտափույթ հանգուցալուծմանը եւ տարածաշրջանում կայունության ու խաղաղության հաստատմանը:

Հանրառեսական մաղթանք եւ եկեղեցականների ռազմաբաշխություն

Հուլիսի 15-ին, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Շայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Ս. Գայանե վանքում կատարվեց Հանրապետական մաղթանքի արարողություն՝ հայրենիքի խաղաղության եւ ապահովության համար, տեղի ունեցավ նաեւ արցախյան 44-օրյա պատերազմին մասնակից եկեղեցականների պարգևաբաշխություն:

Սրբազան արարողությանը ներկա էին ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդության սպասավորները, թեմերից ժամանած քահանա հայրեր, ՀՀ պաշտպանության ճախարարության ներկայացուցիչներ՝ գլխավորությամբ փոխնախարար Արման Սարգսյանի:

Ողջույնի խոսք ասաց Մայր Աթոռի լուսարարապետ Մուշեղ եպս Բաբայանը: Հանրապետական մաղթանքից հետո «Էջ Միածինն ի Հօրե» շարականի երգեցողության ներքո Մայր Աթոռի եկեղեցական հայեցակարգային բաժնի տնօրեն Վազգեն եպս Միրզախանյանը խորան բարձրացրեց հայրապետական սրբատառ կոմիդիները: Պարգև արքայիսկոպսի պար-



գեատրման կոմիդիներ ընթերցեց վանորդից տեսուչ Արտակ եպս Տիգրանյանը:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Ս. Դեւոնդ Երեց» մորախաստատ շքանշանով պարգևատրեց հատուկ հանձնարարություններով հայրապետական միջակ Պարգեւ արք. Մարտիրոսյանին, Շիրակի թեմի առաջնորդ Միքայել արք. Աջապահյանին, Արցախի թեմի առաջնորդ Վրթանես եպս Աբրահամյանին, Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ եպս Գալստանյանին, Արագածոտնի թեմի առաջնորդ Մկրտիչ եպս Պողոսյանին, ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդ Սովետ վրդ. Սարգսյանին, Արցախի թեմից Սահակ վրդ. Շաքարյանին, Գեղարդ արք. Հովհաննիսյանին, Անդրեաս քին. Թավադյանին եւ Հովհաննես քին. Հովհաննիսյանին, Ս. Գեղարդավանքից Արիս արք. Տոնյանին, զնդերեցներ Հրաչյա սրկ. Ղազարյանին, Գոռ սրկ. Գյուրջյանին, Հովհաննես սրկ. Անդրյանին, Արտաշես սրկ. Ներսիսյանին, Մանավազ սրկ. Մկրտչյանին, Վահե սրկ. Մկրտչյանին, Մկրտիչ սրկ. Տեր-Մկրտչյանին, Կարո սրկ. Ղարիբյանին եւ Հրայր սրկ. Լալայանին:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական բարձր տնօրինությամբ վերջերս հաստատված «Ս. Դեւոնդ Երեց» շքանշանը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պատվի բարձր շքանշաններից է, որը հայրապետական սրբատառ կոմիդիով շնորհվում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հոգեւոր դասին՝ ի գնահատություն ազգային-եկեղեցական կյանքում դրսեւորած միջոյալ ծառայության եւ գովարժան վաստակի:

Այս առիթով հայրապետական օրհնության գիր շնորհվեց նաեւ Մայր Աթոռում, թեմերում եւ ՀՀ ՊՆ ԶՈՒ հոգեւոր առաջնորդությունում սպասավորող 38 եկեղեցականի: ➔ էջ 2

Հանրառեսական մաղթանք եւ եկեղեցականների շարգեւաբաշխություն



← էջ 1
Պարզեւաբաշխությունից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնության խոսքն ուղղեց ներկայներիս:

«Սիրելիներ, համախմբվել ենք Ս. Գայանե նվիրական վանքում՝ գնահատանքի եւ պարգևի արժանացնելու արցախյան 44-օրյա պատերազմում մեր զինվորներին աղոթքով զորացրած, արիագործության քաջալերած եւ Աստծո խոսքով մխիթարած հոգեւորականներին:

Ցավով ենք վերհիշում Ադրբեջանի կողմից սանձազերծված աղետալի պատերազմի արհավիրքները: Թշնամու գերակշիռ ուժերի դեմ անձնուրաց պայքար մղեցին մեր հայրենյաց պաշտպանները: Քաջարի մեր զավակներից շատերն իրենց կյանքն ընծայեցին ազգին ու հայրենիքին՝ անմահանալով հերոսական սխրանքներով: Այսօր էլ մեր սրտերում եւ հոգիներում մշտափունջ աղոթք է մեր զոհվածների անմար հիշատակի, անհայտ կորածների ու գերիների վերադարձի եւ վիրավորների ապաքինման համար: Մեր Սուրբ Եկեղեցին եւս ահավոր այդ պատերազմում ունեցավ եւ

զոհված, եւ անհայտ կորած, եւ վիրավոր եկեղեցականներ:

Սիրելի հոգեւոր սպասավորներ՝ հայոց բանակի արիասիրտ զոհերեցներ, դուք, որ անմիջական մասնակցություն եք ունեցել պատերազմում, զինվորներին քաջալերանքի ձեր խոսքն ուղղելով, նրանց մարտական ոգին ամուր պահելով, հայրենյաց պաշտպանության պայքարում սատար կանգնելով, ջուր ու հաց հասցնելով, ռազմի դաշտում շատերին մկրտելով ու Սուրբ Հաղորդություն տալով, այսօր ներկա եք այստեղ՝ արժանանալու բարձր գնահատանքի ձեր գովելի ծառայության համար: Գիտենք՝ պատերազմի ողբերգական տեսարանները տակավին ուղեկից են ձեզ, եւ ձեր սրտերում են նահատակ մեր երիտասարդ զինվորների կորստի ցավն ու կսկիծը: Ձեր հավատքի ու հույսի մեջ, զոհություն Աստծո, դուք զորություն եք գտել վերապրելու դժվարին այդ օրերը եւ ներկայիս շարունակում եք ձեր սպասավորությունը՝ հավատարմությամբ Տիրոջն ու մեր ժողովրդին: Ձեր հոգուց բխող այդ հույսն ու հավատը, սիրելիներ, տարածյալ պահեք մեր ժողովրդի մեջ,

որպեսզի պատերազմի ծանր կորուստներից հետո ազգովի ուժ գտնենք նորից ուղի կանգնելու, հայրենական կյանքը նորոգելու եւ շենացնելու, Հայաստան եւ Արցախ մեր երկիրը վեր հանելու եւ ծաղկեցնելու, մեր պետականությունն ամուր ու անվտանգ պահպանելու:

Հայրական սիրով վերստին Մեր օրհնությունն ու գնահատանքը բերելով ձեզ՝ հորդորում ենք, որ նույն խրոխտ ոգով արդյունավորեք ձեր ծառայությունը Ձինված ուժերում՝ հայրենյաց պաշտպաններին հոգեւոր սնունդ

խարարի, Մեր գնահատանքն ենք հայտնում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը եւ հայոց բանակի հրամանատարական կազմին՝ պատերազմին մասնակցած եկեղեցականների եւ առհասարակ մեր զոհերեցների հանդեպ հոգածու վերաբերմունքի, նրանց ծառայությունն արժեւորելու, մարտական շքանշաններով պարգևատրելու համար: Մաղթում ենք, սիրելի հոգեւոր սպասավորներ, որ այլեւս խաղաղ երկնքի ներքո անցնի ձեր եւ Հայոց բանակի զինվորների ու զորական-

ղովրդի բարօր, ապահով ու արժանապատիվ կյանքի համար: Թող Աստված պահի ու պահպանի մեր ազգն ու հայրենիքը, որպեսզի Տիրոջ օգնությամբ ազգովի միասնաբար կերտենք մեր կյանքի ու պատմության արշալույսը, մեր լուսավոր գալիքը: Եվ թող մեր Տեր Հիսուս Քրիստոսի սերը, խաղաղությունը եւ շնորհները միշտ լինեն մեզ հետ եւ ամենքի. ամենքի», – ասաց Ամենայն Հայոց Հայրապետը:

Այնուհետեւ տեղի ունեցավ ընդունելություն, որի ընթացքում Գարեգին Երկրորդ Ամենայն Հա-



մատուցելու, քաջալերելու եւ մարտական ոգին միշտ բարձր պահելու առաքելության մեջ: Դուք պիտի հարատւեւորեք լինեք ոգին ու ներշնչանքը մեր ժողովրդի, հայոց բանակի, մեր հաղթանակների, մեր երկրի խաղաղության ու անվտանգության պաշտպանության: Այսօր, ի դեմս արարողությանը ներկա պատվարժան զորականների՝ զխավորությամբ ՀՀ պաշտպանության փոխնա-

ների ծառայությունը: Չորացրեք մեր ժողովրդի լավատեսության ոգին, մեր կորուստները վերականգնելու հուսառատությունը, կենարար հավատքի շնորհիվ մեր հաղթանակների վճռականությունը՝ ըստ առաքյալի խոսքի. «Եվ այս է այն հաղթությունը, որ հաղթում է աշխարհին՝ մեր հավատը» (Ա Յովհ. Ե 4):

Աղոթենք միասնաբար մեր երկրի խաղաղության, մեր ժո-

յոց Կաթողիկոսը եւ ՊՆ փոխնախարար Արման Սարգսյանը հանդես եկան խոսքով՝ կարեւորելով հավատքի դերը մարդու կյանքում ու մասնավորապես զինվորական ծառայության մեջ եւ վերստին ընդգծելով բանակում սպասավորող հոգեւորականների կատարած ծառայության կարեւորությունը: Այս առիթով իրենց սրտի խոսքն ասացին նաեւ Պարզեւ արք. Մարտիրոսյանը եւ Վրթանես եպս Աբրահամյանը:

ՏԼԹԵՎԻ ՎԱՆՔ

ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի տարածաշրջանի Տաթեւ գյուղը գտնվում է Որոտան գետի վտակներից մեկի աջափնյա եզերքին՝ անդնդախոր ձորից վեր՝ ծովի մակարդակից մոտ 1610–1680 մ բարձրության վրա, մարզկենտրոն Կապան քաղաքից մոտ 55 կմ հյուսիս-արեւմուտք, Գորիս քաղաքից մոտ 40 կմ հարավ-արեւմուտք, քաղաքամայր Երեւանից մոտ 255 կմ (դեպի հարավ-արեւելք) հեռավորության վրա:

Տաթեւ գյուղի մոտ է գտնվում հռչակավոր Տաթեւի վանքը, որը մատենագրական աղբյուրներում հանդիպում է մաեւ Ս. Եվստաթեոս առաքյալի ուխտ անունով (ըստ ավանդության՝ վանքը կոչվել է Թադեոս առաքյալի աշակերտ Եվստաթեոսի անունով):

Ըստ քրիստոնեական ավանդության՝ Սուրբ Եվստաթեոսը Հիսուս Քրիստոսի 72 աշակերտներից մեկն է եւ Եղիշեի հետ ուղեկցել է Թադեոս առաքյալին՝ նրա քաղաքական շրջագայության ժամանակ: Թադեոս առաքյալը Եվստաթեոսին ձեռնադրել է Սյունիքի առաջին եպիսկոպոս: Սուրբ Եվստաթեոսի աճյունն ամփոփել են *Տաթեւի վանքի* տեղում: Հետագայում վանքը նրա պատվին կոչվել է Տաթեւ:

Տաթեւի վանական համալիրն ամբողջացնում են պարսպապատերը, ձիթհանը, Ս. Պողոս-Պետրոս տաճարը, Ս. Աստվածածին մատուռ-եկեղեցին, Ս. Գրիգոր եկեղեցին, սուրբ Գրիգոր Տաթեւացու դամբարանը, «Գավազան» հուշարձանը (ճոճվող սյուն), սեղանատունը, դասասենյակները,

մատենադարանը, ուխտագնացների հյուրատունը, բնակելի տարածքները, խուհանոցը, բազմաթիվ ծառայողական շինությունները եւ վանական խցերը: Ըստ պատմիչ Ստեփանոս Օրբելյանի՝ Տաթեւի վանքի առաջին եկեղեցին կառուցվել է IV դ. եւ ունեցել է անշուք տեսք, սակավաթիվ ճգնավոր միաբաններ: Արդեն VIII դ. վերջերին Տաթեւ դարձել է Սյունյաց եպիսկոպոսության աթոռանիստը: Տաթեւում են պահվել բազմաթիվ սրբություններ (Քրիստոսի խաչափայտի մասունքով արծաթե հսկա (մարդաչափ) «Բաբելոնյան խաչը», որը պատրաստել էր Սյունյաց Բաբել իշխանի որդի Վասակը), սուրբ Հովհաննես Մկրտչի, սուրբ Ստեփանոս Նախավկայի, տասնմեկ առաքյալների, սուրբ Գրիգոր Ա Լուսավորիչ հայրապետի, սուրբ Հռիփսիմե կույսի մասունքները, սուրբ Մարիամ Աստվածածնի մազերը, ինչպես նաեւ Բյուզանդիայից Հայաստան բերված «Աստվածամուկտ սուրբ Նշանը»):

848 թ. Սյունյաց իշխան Փիլիպեն կառուցել է Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին: Սյունյաց Աշոտ իշխանի պատվերով Հովհաննես եպիսկոպոսը ձեռնարկել է Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու կառուցմանը, որը հայկական խոշորագույն պաշտամունքային կառույցներից է: Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու կառուցման օժանդակել են Սյունյաց իշխանները, հատկապես գահերեց իշխան Աշոտն ու իր կինը՝ Շուշան իշխանուհին: Եկեղեցու հիմնարկերը կատարվել է 895 թ., իսկ կառուցումն ավարտվել է 906 թ.: Սրբա-

տաշ բազալտից կառուցված եկեղեցու գմբեթը հեմված է երկու խոշոր մույթերի եւ արեւմտյան ավանդատների անկյունների վրա: Մույթերը խորհրդանշում են Պողոս եւ Պետրոս առաքյալներին, որոնց մասունքները դրվել են մույթերի հիմքերում եւ անկյուններում: 906 թ. եկեղեցու օծմանը ներկա են եղել Հայոց թագավոր Սմբատ Ա Բագրատունին (890–914 թթ.), Վասպուրականի Գագիկ Արծրունի իշխանը (հետագայում՝ 908 թ., Վասպուրականի թագավոր Գագիկ-խաչիկ Ա Արծրունի, 908–943 թթ.), Հովհաննես Ե Դրասխանակերտցի Հայոց կաթողիկոսը (898–929 թթ.), Աղվանից Սիմոն Բ կաթողիկոսը (902–923 թթ.), իշխաններ ու եպիսկոպոսներ:

Օծման արարողությանը ներկա գտնվողները գյուղեր ու կալվածքներ են նվիրել Տաթեւի վանքին: Հայաստանում արաբական տիրապետության ավարտին կառուցված Ս. Պողոս-Պետրոս եկեղեցին հաղթակամորեն վերածնված հայոց թագավորության հզորությունը խորհրդանշող կառույց էր: Ամենատպալորիչը գմբեթն է՝ ամենաբարձրից մեկը Հայաստանում: Հյուսիսային ճակտոնապատին քանդակված են եկեղեցու հովանավորները (կոստորներ)՝ Սյունյաց Աշոտ իշխանն ու իր կինը՝ Շուշանը, Գեղարքունիքի տեր Գրիգոր Սուփանն ու իր որդի Վասակ Գաբուռ իշխանը, Բաղքի տեր Զագիկ իշխանը: Արեւելյան ճակատին պատկերված են ատամնաձեւ կամարներ եւ երկարավուն օձեր (դրանք համարվում էին իմաստունության, հաջողության խորհրդանշաններ):

Հովհաննես եպիսկոպոսը Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու կառուցումը նշանավորել է նրա հարավային մուտքի դիմաց Ս. Երրորդությանը նվիրված հուշայայուն կանգնեցնելով (կոչվել է «Գավազան»), որը, հատուկ տեխնիկայով կառուցված հիմքի շնորհիվ, ճոճվել է: Տաթեւի վանքը պարսպապատվել է, թեք տեղանքը բարձր հեմապատերի միջոցով հարթվել է, կառուցվել են թաքստոցներ, մկուղներ, դեպի բակը գնացող խցեր, սեղանատուն, արհեստանոցներ, մթերանոցներ, գրատուն, եկեղեցու առջեւ՝ գավիթ-աղոթատուն եւ Սյունյաց իշխանների տապանատուն:

IX դ. Տաթեւի վանքը Հայաստանի ամենախոշոր ու ամենամշանավոր վանքն էր. ունեցել է շուրջ 500 միաբան, բարձրագույն դպրոց՝ վարդապետարան: Վանքում աշխատել, ստեղծագործել են փիլիսոփաներ, երաժիշտներ, մանրանկարիչներ, գրիչներ:

918 թ. Հովհաննես Ե Դրասխանակերտցի կաթողիկոսը Սյունյաց եպիսկոպոս է նշանակել Հակոբ Դվնեցուն, որը շարունակել է Տաթեւի վանքի կալվածքների ընդլայնման գործը: Տնտեսապես հզորանալով՝ Տաթեւի եպիսկոպոսությունը 940–950 թթ. փորձել է անկախանալ Հայոց հայրապետական Աթոռից: Ի պատասխան Հակոբ եպիսկոպոսի անջատողական գործողությունների՝ Անանիա Ա Սոկացի Հայոց կաթողիկոսը (946–968 թթ.) բանադրանքի է ենթարկել նրան: (Բանադրանքը եկեղեցու կողմից կիրառվող պատժի տեսակ է՝ նզովք, անեծք (հուն.՝ անաթեմա):

← էջ 4

Գրեք ընտրահանդես Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Նույսի 23-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանում, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ «Եկեղեցին եւ

տիրոջ» Վաչե եւ Թամար Մանուկյան կանոնագիրը հայոց»-ի կազմու-

թյան համար: Սիրելիներ, հրատարակված գրքերն իրենց պարունակով վառ վկայություններ են մեր ժողովրդի ստեղծագործ եւ առաջադեմ

թյունը եւ կազմակերպելով իր ազգային-եկեղեցական կյանքը: Թեմատիկ խմբավորմամբ հրատարակված կանոնագրքի հա-մաբարբառը, կարծում ենք, առաջին քայլն է մեր եկեղեցու արդի պահանջները բավարարող մոր կանոնագրքի կարելու գործի ձեռնարկման ճանապարհին: Ամբողջական եւ արդիական կանոնագրքի ստեղծումն այսօր օրակարգային է եկեղեցի-պետություն եւ եկեղեցի-հասարակություն փոխհարաբերություններն ավանդական եւ ժամանակակից իրողությունների հիմքերի վրա զարգացնելու առումով:

Թող իրավագիտական բնույթի այսպիսի կարելու աշխատությունները հարստացնեն մեր ժողովրդի գիտակրթական անդաստանը՝ ամրապնդելով իրավունքի գերակայության գիտակցությունը ու մեր կյանքում արդարությունը եւ բարին հաստատելու նախանձախնդրությունը, բանգի ինչպես սաղմոսերգուն է ասում՝ Աստված «դատում է աշխարհն արդարությամբ եւ իր ժողովրդին՝ ուղղամտությամբ» (Սղմ. 9. 9):

Հայցում ենք Երկնավորից քաջառողջություն եւ մոր արգասիքներ՝ գրքերի հեղինակներին: Աստծո օրհնությունը բոլորիդ եւ համայն մեր ժողովրդին. ամեն:

Աշխատությունների հրատարակության առիթով իր ողջույնի խոսքն ասաց ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը՝ ընդգծելով կատարված աշխատանքի կարևորությունը:

«Սահմանադրական մշակույթի արժեքանակն ակունքները հայ ժողովրդի հազարամյա տարեգրության ծալքերում» կոլեկտիվ մենագրության վերաբերյալ բանախոսությամբ հանդես եկավ «Սահմանադրական մշակույթ» միջազգային վերլուծական կենտրոնի հոգաբարձուների նախագահ, ի. զ. դ., պրոֆեսոր Գագիկ Հարությունյանը՝ մասնավորապես խոսելով

սահմանադրական մշակույթը՝ խորագրով ընտրահանդես: Հընթաց ընտրահանդեսի՝ ներկայացվեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչության լույս ընծայած «Համաբարբառ կանոնագիրը հայոց» ժողովածուն (կազմող՝ Արամ Մարտիրոսյան, պատասխանատու խմբագիր՝ Շահե Ծ. վրդ. Ամանյան) եւ «Սահմանադրական մշակույթի արժեքանակն ակունքները հայ ժողովրդի հազարամյա տարեգրության ծալքերում» կոլեկտիվ մենագրությունը (հեղինակներ՝ Ազատ Բոգոյան, Ալեքսան Զակոբյան, Արթուր Վաղարշյան, Արման Եղիազարյան, Արտակ Մովսիսյան, Գագիկ Հարությունյան, Գրիգոր Թամանյան, Հարություն Մարություն, Նարինե Միրզոյան, պատասխանատու խմբագիրներ՝ Գագիկ Հարությունյան, Արտակ Մովսիսյան, Արարատ քին. Պողոսյան, Սարգիս Մելքոնյան):

Ընտրահանդեսի բացումն ազդարարեց Մայր Աթոռի մատենադարանի եւ հրատարակչության տնօրեն Արարատ քին. Պողոսյանը: Այնուհետեւ ընտրահանդեսի մասնակիցներին իր հայրական օրհնությունն ու պատգամը փոխանցեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Իր խոսքում Նորին Սրբությունը մասնավորապես նշեց. «Ընտրահանդեսի սիրելի մասնակիցներ, Ողջունում ենք ձեզ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում՝ աստվածակառույց նվիրական սրբօրրանում մեր ժողովրդի:

Մատենադարանի այս լուսավոր հարկի ներքո համախմբվել ենք Մայր Աթոռում հրատարակված երկու արժեքավոր աշխատությունների՝ «Սահմանադրական մշակույթի արժեքանակն սկզբունքները հայ ժողովրդի 1000-ամյա տարեգրության ծալքերում» եւ «Համաբարբառ կանոնագիրը հայոց» գրքերի ընտրահանդեսի ուրախ առիթով, որի համար գոհություն ենք հայտնում Բարձրալիք: Խնամքով եւ նախաձեռնողությամբ ստեղծված այդ գրքերն այսօր դրված են մեր ժողովրդի սեղանին եւ հանձնված են հատկապես իրավունքի ու պատմության ոլորտի մասնագետների եւ հոգեւոր ու գիտակրթական լայն շրջանակների ուշադրությանը:

Գրքերի հեղինակները մեր եկեղեցու արժանավոր զավակներ են, հայրենասեր եւ մեր երկրին ու ժողովրդին նվիրված անձինք, որոնք հարուստ վաստակ ունեն գիտության եւ կրթության բնագավառներում՝ տարիներ ի վեր դասավանդելով տարբեր բարձրագույն հաստատություններում, մաե Գեւորգյան հոգեւոր ճեմարանում: Ուրախ ենք, որ այսօր առիթն ունենք հայրապետական Մեր օրհնությունը եւ զնահատանքի խոսքը բերելու ձեզ, մեծարգո՝ հեղինակներ, ինչպես եւ՝ գրքերի հրատարակման գործում մասնակցություն բերած հոգեւորականներին ու աշխարհականներին: Այս առիթով Մեր մասնավոր գնահատանքն ենք ցանկանում հայտնել մեծարգո տիար Գագիկ Հարությունյանին՝ «Սահմանադրական մշակույթի արժեքանակն սկզբունքները հայ ժողովրդի 1000-ամյա տարեգրության ծալքերում» գրքի նախաձեռնության եւ հրատարակության պատրաստման համար, ինչպես եւ մեծարգո տիար Արամ Մար-

մտքի: Ծավալուն այս աշխատությունները ներկայացնում են հայ իրականության մեջ պատմության հնագույն ժամանակներից ձեւավորված օրենսդրական մշակույթը՝ խարսխված մեր ժողովրդի հոգեւոր եւ մտավոր ժառանգության, քրիստոնեական արժեքների ու ավանդույթների վրա: Ազգային-եկեղեցական մեր կյանքի կանոնակարգման պատմական փորձառությունը, իրավակարգավորման սկզբունքները այսօր պիտի օգնեն առավել



ներդաշնակ կազմակերպելու եւ զորացնելու հոգեւոր եւ պետական մեր կյանքը, առավել ոյուրընթաց դարձնելու օրենքի վրա խարսխված մեր հասարակական կյանքի բնականոն զարգացումը: Արդարեւ, իրավական պետությունը կարող է կառուցվել բարձր իրավագիտակցության հիմքի վրա, քանզի հանրային ճանաչողության առանցքը կազմող իրավական եւ արժեքային ըմբռնումներն են ձեւավորում հասարակական վարքագիծը:

Արդարությունը եւ իրավունքը աստվածադիր սկիզբ ունեն եւ Սուրբ Գրքի հիմնական սկզբունքներից են՝ սիրո, հույսի եւ հավատի հիմնարար արժեքների հետ: Արդարությունը եւ օրինադրությունը մեր կյանքում պիտի ամուր մնան ինչպես սահմանված օրենքների պահանջով, այնպես եւ քրիստոնեական սիրո ոգով՝ նպաստելով հասարակության համախմբմանն ու միաբանությանը: Հանրության համերաշխությունը հաստատուն է արդարության մեջ, իրավունքի եւ օրենքի անխտրական գործադրմամբ եւ վկայությունն է տերունապատվեր սիրո եւ հավատի դրսեւորման:


Այս արժեքների հիմքով ձեւավորվել են մեր եկեղեցու Կանոնագիրը, դատաստանագրքերը, որոնցով մեր ժողովրդըն առաջնորդվել է մաե պետականության բացակայության պայմաններում՝ պահպանելով իր հավաքականությունը, ինքնու-

սահմանադրական մշակույթի ուսումնասիրման տեսլականի եւ հայոց իրավագիտական մտքի պատմական ժառանգության հանրահռչակման անհրաժեշտության մասին: Վերջինս մաե իր ընտրահանդեսները հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ կարելու այս նախաձեռնության իրագործմանը սատարելու եւ այն հովանավորելու համար:

«Համաբարբառ կանոնագիրը հայոց» ժողովածուի ստեղծման, աշխատության կարելության եւ արդի կիրառելիության վերաբերյալ բանախոսությամբ հանդես եկավ իրավագիտության պատմության պրոֆեսոր Արամ Մարտիրոսյանը (Սրբոնի համալսարան): Համաբարբառի կազմման սկզբունքների եւ աշխատության պատրաստության գործում պրոֆեսոր Արամ Մարտիրոսյանի կարելու ներդրման մասին խոսեց մաե Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Շահե Ծ. վրդ. Ամանյանը:

Ընտրահանդեսն ամփոփվեց Ամենայն Հայոց Հայրապետի Պահպանիչ աղոթքով, որին հաջորդեց ավանդական գինեձոնը:

Լրատվական նյութերը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատվական համակարգի



ՀԱՅ ԿՐԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ՄՐՎԵՄՏԻ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱՆ ԵՎ ՄԱՍԻՆԻՆԵՐԸ

Սկիզբը՝ թիվ 11–13

Գրականության եւ արվեստի թանգարանն ունի մասնաճյուղեր՝ հայ դասական գրողներ Գերեմիկ Դեմիրճյանի (Երեւան), Հովհաննես Թումանյանի (Դսեղ), Ակսել Բակունցի (Գորիս), Պերճ Պռոշյանի (Աշտարակ), Սիլվա Կապուտիկյանի (Երեւան) տուն-թանգարանները եւ խոշոր հայագետ Գրիգոր Ղափանցյանի թանգարանը (Աշտարակ), որոնք բնականաբար գործում են թանգարանի իրավասության տակ:

Առավել արժեքավոր թանգարանային առարկաները ժամանակի կործանարար ազդեցությունից զերծ պահելու համար, հնարավորության սահմաններում, կոնսերվացվում, վերանորոգվում եւ վերականգնվում են: Բնագրերը, թանգարանին հասու տեխնիկական միջոցներով, պատճենահանվում են՝ զանազան նպատակներով օգտագործելու համար: Պարբերաբար հաշվառվում են նյութերը, ստուգվում դրանց վիճակն ու պահպանման պայմանները:

Թանգարանի կարելու գործառնությունից է մաե ֆոնդերի ու հավաքածուների համալրու-

մը: Վերջինս կատարվում է զննման եւ նվիրատության ճանապարհով: Գնումն իրականացվում է հիմնականում պետական միջոցներով, ինչպես մաե բարերարների աջակցությամբ: Առ գրականությունն ու արվեստը մեր ժողովրդի արյան մեջ ի սկզբանե եղած ակնածանքը, սերն ու պաշտամունքը մեր շատ հայրենակիցների մղել եւ մղում են թանգարանին նվիրաբերել ժառանգությանը ստացած կամ այլալից եղանակներով ձեռք բերած արժեքները: Թանգարանն ինքն իր հոգեւոր գանձարանը համալրելու համար զբաղվում է հավաքչական աշխատանքով, կապեր է հաստատում թե՛ Հայաստանի եւ թե՛ Սփյուռքի մշակութային, գիտական ու կրթական կառույցների, ինչպես մաե անհատների հետ: Որոշ գրողներ ու արվեստագետներ իրենք են իրենց արխիվային նյութերը նվիրաբերում թանգարանին: Հատկապես միջոցներով, որ դեռեւս 1935 թ. Ե. Զարեման անձամբ թանգարանին է հանձնել իր անմահ «Սոմա» պոեմի ինքնագիրը: Նույն կերպ իրենց ողջության օրոք թանգարանում անհատական ֆոնդերի հիմքեր են դրել խորհրդահայ եւ սփյուռքահայ մի շարք գրողներ (Գ. Սարյան, Ստ. Զորյան, Վ. Սալեգյան, Լ. Մեսրոպ եւ այլք):

Իսկ Ա. Զոպանյանի, Թ. Ազատյանի, Վ. Հապեշյանի, Վ. Մավյանի հարուստ արխիվներն ու գրադարանները թանգարանին են հանձնվել իրենց կտակների համաձայն:

Հետխորհրդային շրջանում համալրումներ լինում են հիմնականում նվիրատվությունների շնորհիվ: Վերջին տարիներին ավելի շատ ու ավելի շահեկան է համալրվում թանգարանը, քան խորհրդային լավագույն տասնամյակներում: Եվ դա, ըստ տնօրենի, շնորհիվ թանգարանի շուրջ իրենց ձեւավորած վստահության մթնոլորտի եւ մեր երեւելիների մասունքները հայաստանյան թանգարաններին ի պահ տալու գիտակցությունը սերմանելու ուղղությամբ կատարած բացատրական աշխատանքների:

Հայ մշակույթը, բնականաբար, շարունակում է զարգանալ, ստեղծվում են նորանոր գործեր, թանգարանի առաքելություններից է դրանցից զատել արժեքավորը, ինչպես հնուտ գանձախոյզը աղամանդն ու ոսկին է զատում այլ քարերից ու մետաղներից, իրացնել դրանք՝ հայ մշակույթի զարգացման շարունակականությունն ամրագրելու եւ ապագայի հետազոտողին ու արվեստասերին ներկայացնելու համար:


Գնման թե նվիրատվության միջոցով ձեռք բերված արխիվային նյութերը գրանցվում են թանգարանի մայր մատյանում եւ ստանալով թանգարանային առարկայի կարգավիճակ՝ դառնում ազգային սեփականություն:

Թանգարանի ֆոնդերն ու հավաքածուները ենթարկվում են գիտական մշակման ու վերամշակման, այս աշխատանքը կատարում են համապատասխան չորս բաժինները. սա թանգարանի հաջորդ կարելու գործառնություն է:

Մասնագետները ցուցակագրում եւ քարտագրում են ֆոնդերն ու հավաքածուները՝ առանձին-առանձին: Դասակարգվում են դրանցում առկա ստեղծագործությունները՝ ըստ ժանրերի, համակարգվում են թանգարանային մյուս առարկաները: Յուրաքանչյուր նյութ ստանում է իր համարը, մշվում են հիմնական պարամետրերը, եւ ըստ հարկի կատարվում են համառոտ ծանուցումներ:

Գիտական բաժիններն աստիճանաբար անցնում են առավել մեծարժեք ֆոնդերի նյութերը շատ ավելի համակողմանիորեն ու մանրամասն ներկայացնող մատենագիտական ցանկերի, ինչպես մաե գիտական մոր, համապարփակ ուղեցույցների ստեղծմանը: ➔ Էջ 5

Վաթսուռականների արձակագիրներ. Ժամանակը եւ հերոսը



Սկիզբը՝ թիվ 12–13

Մյուսիսներ և մարտերը զարգացնում է քաղաքակրթությանն ու բնապաշտությանը, բնական, անաղարտ մարդու հայտնաբերմանը նվիրված մտքեր, որոնք եւս, երբեմն իրենց հակառակ տարբերակներն ունենալով հանդերձ, նախեսառաջ կարեւորություն են ստանում հենց իր՝ հեղինակի ստեղծագործական նախասիրությունները բացահայտելու տեսակետից: Գրում է. «... եւ կրթոտ ցասումն է առաջանում՝ չղջիկի պես խցկվել քաղաքակրթության չլուսավորված մի ծակ ու դուռը փակել» (նույն տեղում): Մաթեոսյանի ստեղծագործության մեջ բացահայտորեն առկա է քաղաքակրթության որոշ հատկանիշերի՝ առաջին հերթին քաղքենիության, մեքենայության, ամեն ինչ վիճակագրական հաշվառման ենթարկելու, կյանքի ամեն մի թաթուր

զաղտնիք մերկացնելու դեմ ընդվզելու միտում: Այս միտումը կյանքի խախտված հավասարակշռությունը վերագտնելու նպատակով փորձում է որոնել գոյության նախահիմքեր, ինչը մեկ ընդունում է բնապաշտության, մեկ մոնումենտալ, անաղարտ մարդու, մեկ կեցության նախնական զգայությունների ու բնագրների վերականգնման պատկեր:

Գրողը, իր մեջ կրելով քաղաքակրթության ժամանակակից նվաճումները, ցանկանում է այն կատարելագործել մարդու էության մեջ գոյություն ունեցող տեսական ու մնայուն, նախնական ու հավիտենական այնպիսի հատկանիշերով, որոնք պահպանվում են նրա նախապապերից ժառանգած, սերնդեսերունդ փոխանցված արյան բաղադրության ու ժառանգական սաղմի մեջ: Այս տեսակետից Մաթեոսյանի հողվածում կարեւորություն ունեն մաեւ հետեւյալ մտքերը. «Գրականությունը օպոզիցիայի մեջ է կյանքի հետ (թեկուզ եւ լավ կյանքի հետ), լավի իր դիրքերից. այլապես նա կկորցնէր անվերջ հեղափոխական իր բնավորությունը, կկտրէր իր կապը կյանքի հետ եւ կմեռներ: Հիմա, երբ մարդկային բանականությունը սանձազերծվել է կաշկանդումներից ու բացարձակ հաղթար-

շավի է գնում, երբ թվում է, թե աշխարհը հասել է գրականության երազած հեռունեքին, գրականությունը ներթողվում է կյանքը: Ամենեւին: Գրականությունը փնտրում է մոնումենտալ մարդուն»: Եվ ապա՝ «Գրականությունը փնտրում է Աստծո մարդուն: Փնտրում է մարդու անաղարտ վիճակը» (նույն տեղում): Այս խոհերը, որոնք իր իսկ ստեղծագործության տեսական հաջող ընդհանրացումներ են, լրացնում են նախկինում նրա արտահայտած որոշ մտքեր՝ շարադրված «Սպիտակ թղթի առջեւ» խոհագրության մեջ: Ի վերջո, լավի դիրքերից անգամ առավել լավի կարոտը, որ մարդու գոյության հավերժական ուղեկիցն է, հանգում է մի հին ու արդար ձեւակերպման, որին հասնում է եւ Մաթեոսյանը. «Գրականությունը աշխարհի ազնվամալու տառապալից ճիգն է: Դա գրականության կոչումն է ի ծնէ» (Հ. Մաթեոսյան, Սպիտակ թղթի առջեւ, ԳԹ, 1966, թիվ 42): Այս ամենի իմաստավորումն սկիզբ է առնում ժամանակակից աշխարհում գրողի դժվարին, տառապալից, մաեւ անձնագոհ դերի գիտակցումից, որ դիպուկ կերպով ձեւակերպել է մա. «Այս սիրելի-սարսափելի, խելացի-խելագար, հասկանալի-խճճված աշխարհում դաժան բան է մերկ լինել, լինել աշխարհի մերկացած նյարդը՝ գրող: Սպիտակ թղթի առջեւ ամեն վայրկյան կարելի է կաթվածահար լինել» (նույն տեղում):

Մաթեոսյանն իր հողվածներում կարեւորություն է տալիս գրողի «մասնագիտական պատվասնորոշությանը», պատկերվող նյութը խորությամբ ու ամբողջ ընդգրկումով, զուգահեռներով ու անդրադարձնե-

րով, մանրամասներով ու ներքին ամբողջ փոխակերպումներով կենդանի ու լիարժեք վերարտադրելու գործին, պատկերվող կյանքի ամբողջական ընդգրկմանը: «Առողջ գրականության միակ գրավականը ամբողջ կյանքի ընդգրկումը կամ ընդգրկման փորձն է, բայց... չենք ընդգրկում, չենք փորձում... կենսական ուժերից ու դիմադրությունից զուրկ կյանքանման մի բան ենք վերցնում, ինչը որ ծովում ու կեռվում է մեր իմացածի պես...» (Հ. Մաթեոսյան, Ս. Սարիմյան, Գրողի մասնագիտական պատվասնորոշությունը, երկխոսություն, ԳԹ, 1974, թիվ 19):

Միջանկյալ հիշենք գրական ազդակը, որ գալիս է Չարենցից.

Նյութը դիմադրում է, դիմադրում է միշտ, —
Լիմի երկաթ, կղմինդր, լիմի մարմար:
Դիմադրում է բառը — Ահա դեմից
Արդեն վազում է հանգը — «հարմար»:
Դա — հնի ճանապարհն է. հեշտի, բնագրի,
Օ, հնի հրումն է դա, սովորության հունը, —
Այնինչ արեւը, լուսինը եւ մեր երկրագունդը
Անվերջ կարծրանում են իրենց

անեզրական վազքից:
(IV, 146)

Մաթեոսյանն այն կարծիքին է, որ պատումի մեջ պետք է ներգրավվի «ամբողջ կյանքն իր բոլոր կարեւոր ու երկրորդական բաղադրիչներով», եւ ամենայն լռությամբ պետք է մոտենալ կյանքի փաստին. «Մեր այսօրվա գրականության թերությունը նյութի, փաստի քաղցն է, կամայական վերաբերմունքը նյութին, կյանքին, փաստին» (նույն տեղում): ➔ էջ 6, 8

ՏԵԹԵՎԻ ՎԱՆԷ

← էջ 2

Այն եկեղեցու կողմից հավատացյալի վրա դրված արգելք է, երբ բանադրվողը զրկվում է հաղորդություն ստանալուց, եկեղեցական ծեսերին ու խորհուրդներին մասնակցելուց): Օգտվելով դրանից՝ Տաթևի վանքի հոգևոր ենթակայության տակ գտնվող որոշ տարածքների (Գեղարքունիք, Երնջակ, Գողթն գավառներ) հոգևոր առաջնորդները հրաժարվել են ճանաչել Տաթևի վանքի գերագահությունը եւ հիմնել են առանձին եպիսկոպոսություններ, իսկ աշխարհիկ իշխանները տիրացել են վանքի կալվածքների մեծ մասին: 958 թ. Սյունյաց մետրոպոլիտ դարձած Վահան Սյունեցուն (968–969 թթ.) Հայոց կաթողիկոս Վահան Ա Սյունեցի) հաջողվել է մասամբ վերականգնել Տաթևի վանքի կալվածքներն ու իրավունքները: 1006 թ. Սարգիս Ա Սեւանցի կաթողիկոսի (992–1019 թթ.) շրջաբերականով Տաթևի եպիսկոպոսությանն են վերադարձվել նրա նախկին բոլոր տարածքները: 1043 թ. Հովհաննես եպիսկոպոսը կառուցել է Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու հարավային պատին կից սրահը, իսկ 1046 թ. Սյունյաց Սմբատ Բ թագավորի (1040–1051 թթ.) օժանդակությամբ վերականգնել է Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին՝ որմնասյան վերելում ագուցելով սուրբ Գրիգոր Լուսավորչի մասունքը: Նրա հաջորդը՝ Գրիգոր եպիսկոպոսը, 1087 թ. կառուցել է գավիթներ, հանգստավայր-հովանոցներ, վանքի դարպասը վրան կենտրոնազմբեթ Ս. Աստվածածին եկեղեցին: 1138 թ. երկրաշարժից ընկել է Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու գմբեթը, ավերվել Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին: 1170 թ. Բաղաբերդը գրաված սելջուկ-թուրքերը կողոպտել են Տաթևի եպիսկոպոսարանի գանձերը, այրել ձեռագրերը (մոտ 10 հազար), երկրամասն ավերակ ու անմարդաբնակ դարձրել: Ամայքցել է մաեւ Տաթևի վանքը: Տաթևի առաջնորդները տեղափոխվել են ավելի ապահով վայր՝ Վայոց



ձոր գավառ՝ Նորավանք: 1216 թ. Նորավանքում եպիսկոպոսություն է հիմնվել, եւ Սյունյաց Աթոռը պառակտվել է 1261 թ. Սմբատ եւ Տարսայիճ Օրբելյան իշխանները նորոգել ու բարեկարգել են Տաթևի վանքը:

Տաթևի վանքը վերստին հզորացել է, երբ 1286 թ. Կիլիկիայում Կոստանդին Բ Կատուկեցի կաթողիկոսը (1286–1289 թթ.) Ստեփանոս արքեպիսկոպոս Օրբելյանին օժել է Սյունյաց Աթոռի մետրոպոլիտ եւ հայոց նախաթոռ եպիսկոպոս (պրոտոֆրոնտես): Ստեփանոս արքեպիսկոպոս Օրբելյանը միավորել է Սյունյաց պառակտված եպիսկոպոսական Աթոռները, մեկնել Մոնղոլիա՝ Արղուն խանի մոտ, եւ հաստատել Տաթևի վանքի գերագահությունը Սյունիքի բոլոր թեմերի նկատմամբ: Սյունյաց Աթոռը մետրոպոլիտական աստիճանի հասցնելը պայմանավորված էր Սյունյաց իշխանության հզորացումով: Սյունյաց մետրոպոլիտությունն իր են-

թակայության տակ ունեցել է տասներկու եպիսկոպոսական վիճակ:

1295 թ. Ստեփանոս արքեպիսկոպոս Օրբելյանը հիմնովին վերակառուցել է երկրաշարժից ավերված Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին: Մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանի առաջնորդության տարիներին (1286 թ.) կառուցվել է Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու զանգակատունը: Նորակառույց զանգակատան համար ձուլված զանգերից մեկը պատրաստվել է Ստեփանոս Օրբելյանի օրոք (1302 թ.), իսկ մյուսը՝ 1304 թ.: Նրա մահվանից հետո: Չանգերը բավականին խոշոր են եւ պատրաստվել են մեծ վարպետությամբ: Չանգերից մեկի վրա գրված է. «ԹՎ. ՉԾԱ (1302 թ. — Ա. Մ.): Լսելի արա ինձ, Տէր, զձայն ցնծութեան եւ զուրախութեան, Անեղին ծննդեամբ: ՉՏէր Սփ. Սիւնեաց գահին կոչեա ի փառսդ հայրենեաց»: Երկրորդ զանգի վրա հետեւյալ արձանագրությունն է. «ԹՎ. ՉԾԳ (1304 թ. — Ա. Մ.):

Լսելի արա ինձ, Տէր, զձայն ցնծութեան եւ զուրախութեան. եւ ցնծասցեն ոսկերք իմ տառ[ապետ]լ. գթա Քրիստոս Աստուած ի Տէր Ստփ. (Ստեփանոսին.— Ա. Մ.):»:

XIII դ. վերջին Տաթևի վանքը դարձել է ունիթորության դեմ մղվող պայքարի կենտրոն: Ունիթորները (միարարներ) Հռոմի Կաթոլիկ եկեղեցու հետ միության (ունիայի) գաղափարի վրա հիմնված եկեղեցական ուղղության հետևորդներն էին, որոնք ընդունում էին Հռոմի պապի գերագահությունը, կաթոլիկական դավանանքը, ծեսը՝ պահպանելով ժամերգության ազգային լեզուն: Ունիթորության առաջացումը պայմանավորված էր պապականության եւ արեւմտեվրոպական տերությունների աշխարհակալական քաղաքականությամբ: Հայ իրականության մեջ նույնպես ունիթորությունն ուներ քաղաքական երանգավորում. Կաթոլիկ եկեղեցու հետ միավորվելու ձգտումը նպատակ էր հետապնդում Արեւմտյան Եվրոպայի ռազմաքաղաքական օգնությամբ ազատագրվելու օտար լծից եւ վերականգնելու հայկական պետությունը: Ունիթորությունը տարածված էր հատկապես Կիլիկյան Հայաստանում: Ունիթորների եւ ազգային ավանդներին հավատարիմ հոսանքի հետևորդների (հակաունիթորների, հակամիարարների) միջեւ սուր պայքար է ծավալվել Կիլիկիայի հայկական պետության թուլացման եւ անկման շրջանում (1289–1375 թթ.): Հայոց եկեղեցու դավանանքի, ծիսակարգի անաղարտության, ավանդական կարգի եւ ինքնուրույնության պահպանման համար ունիթորության ու Կիլիկիայի լատինամետ հայ հոգևորականների դեմ անհաշտ պայքար է մղել հայ հոգևորականության ավանդապահ թեւը: Ունիթորությունն աստիճանաբար կորցրել է իր նշանակությունը եւ մարել՝ չիրականացնելով իր հետապնդած նպատակները:

Շարունակելի

Արման ՄԱՆՈՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

Զարեհ Որբունու պատմվածքները



Սկիզբը՝ թիվ 8–10, 12–13

Սփյուռքահայության սոցիալական վիճակի, տառապանքի ու թշվառության մեջ հուսալքումների, ինչպես նաև նոր աշխարհում դժվարությունների հաղթահարումով իր տեղը հաստատելու, գոյատևելու, պայքարով ապրելու հայերի ջանքերն են պատկերում բազմաթիվ պատմվածքներ: Ընդգծվում է սոցիալական հարցը,

առաջադրում են կենսապայքարի հնարավորություններ, որով եւ սփյուռքահային գրողը հոգեպես ամրապնդում է գոյատևման դժվարին ճանապարհին:

«Անձրեւոտ օրեր» պատմվածքում բնության երեւոյթը՝ անձրեւը, դառնում է միջոց՝ կերպարների հոգեբանության եւ մտածողության բացահայտման համար: Թուրքիայի հայահալած քաղաքականության, իրականացրած Մեծ եղեռնի պատճառով բազմաթիվ հայեր ցրվեցին աշխարհով մեկ, քանդվեցին բազում ընտանիքներ: Գլխավոր կերպարի՝ Տիգրանի միջոցով գրողը ցուցադրում է հայրենիքից հեռու գտնվող հայի ողբերգությունը: Ինչքան էլ օտար տերություններն ու քաղաքները հյուրընկալ վերաբերմունք ունենան, հայրենիքի «համ» ուրիշ է:

Մի քանի օր շարունակ տեղացող անձրեւը չի թողնում անգամ դուրս գալ տներից: Փարիզում հանգրվանած ընտանիքի տարբեր անդամներ տարբեր կարծիք ունեն իրողության վերաբերյալ: Պանդխտությունը նրանց քշել, տարել է հայրենիքի սահմաններից հեռու, ջնջել է ընտանիքի ներսում առկա հարազատության զգացումը: Ընտանիքի անդամները տարբեր սկզբունքներ ունեն, միջնորդ Տիգրանն ապրում է մեծ ցավով, հայրենիքի կարոտով, հարցուփորձ է անում Հայաստանի մասին: Ցանկացած պարագայում հերոսի համար Հայաստանը դառնում է կարոտալի եզերք, որին ձգտում է նա հասնել: Այսպես՝ «—Անձրեւը Ֆրանսիայի հա-

տուկ բան մը չէ: Հայաստանն ալ անձրեւ կը տեղայ, այստեղ ալ, ամէն տեղ ալ» (2. Որբունի, Անձրեւոտ օրեր, էջ 11):

Ի տարբերություն ընտանիքի մյուս անդամների՝ մասնավորապես քույրերի, Տիգրանը դժգոհ է օտար տերության բարքերից, առօրյայից ու կենցաղից: Նա երազում է իր հայրենիքում լինելու մասին: Մայրն ընդդիմանում է նշելով, որ հայրենիքում կմնային առանց աշխատանքի ու կեցության միջոցների:

Տիգրանը բարկանում էր, երբ իրեն ժեռմեն էին անվանում: Նրան թվում էր՝ այդպես ուրանում է Մեծ եղեռնին զոհ զնացած հոր հիշատակը: Նա հայրենիքի մասին տեղեկություններ ստանում էր ընկերներից՝ երվանդից, ինչի համար արժանանում էր ընտանիքի անդամների մախատիքներից: Որանց թվում էր՝ երվանդը տրամադրում է Տիգրանին, նրան ինչ-որ գաղափարներով համակում: Սակայն Տիգրանն իսկական հայրենասեր էր, հայրենիքի ճակատագրով մտահոգվող անհատ: Ամեն անգամ, երբ խոսք էր լինում հայրենիքից, նա մեծագույն ցավ էր ապրում: Գրողը Տիգրանի հոգու տառապանքներին համահունչ բնության պատկեր է ընտրել. արտասվում էր նաեւ հերոսի հոգին, իսկ ընտանիքի անդամները հաղորդակից չէին նրա մտահոգություններին: Ավելին՝ մայրը, քույրերը կարծում էին, որ Հայաստանում չէին կարող լուծել նյութական կեցության խնդիրը եւ ապրել ապահովված ու բարեկեցիկ կյանքով:

Որբունին, ինչպես Շուշանյանը, Ջարդարյանը, Շահնուրը եւ այլ գրողներ, պատկերում է հայի տառապանքը, փորձում վերլուծել կյանքի երեւոյթները՝ զգուշացնելով ուծացման վտանգից: Եթե 20-ական թվականներին ստեղծագործող գրողն ուզում էր

փարատել հայրենակիցների կարոտախտը ծննդավայրի վերհուշերով, ապա տասնամյակի վերջում եւ 30-ականի սկզբում նա շրջվում էր դեպի իրականությունը, դեպի նոր կյանքը՝ ընդգծելով ծառացած մեծ վտանգը՝ ուծացումը: 20–30-ական թվականներին սփյուռքահայ գրականության ու մամուլի բարձրացրած կարեւոր հարցերից մեկն էլ նոր հայրենիքի հետ հարաբերության խնդիրն էր: Բազմաթիվ հայեր հայրենիքին ցույց են տալիս նյութական ու բարոյական օգնություն: Ինչպես իրավագիտորեն նկատել է Ա. Փլատյանը, «Շահնուրը, Լոխումը, Ճիզմեճյանը, Որբունին, Փարիզի այդ հեղձուցիչ մթնոլորտին մեջ. սկսան ծլարձակիլ՝ կերտելով մեր հետպատերազմյան գրականության շքեղանքը... Լոխումները բան մը չարտադրեցին, բայց իրենց փարիզյան կյանքով, սնունդով տվին Շահնուրյան գրականության բողբոջումին ուռնացման: Ամենն ալ լավ տղաք էին Շահնի շունչով ու Պերպերյանի ոգիով օծում» (Ա. Փլատյան, Շահան Շահնուր, Նյու Ջերսի, 2003, էջ 118):

Որբունու պատմվածքներում եւս առկա է ուծացման գործոնը, ինչպես նաեւ մշակութային բախումը: Արեւմտահայաստանի երեկվա գեղուկը կամ պոլսեցի արհեստավորը իրեն գտել էր գորավոր, շլացուցիչ ու մամլիչ օտար իրականության մեջ: Գեղեկական-արհեստավորական այդ զանգվածն աշխատանքային ամբողջ օրվա ընթացքում բազմաթիվ եւ բազմազան թելերով կապվում էր ընդունող հասարակության հետ եւ միայն աշխատանքային ժամերից դուրս՝ երեկոյան, փակվում իր ազգային-էթնիկական կաղապարում: Այստեղ ուծացումը շատ ավելի զորեղ ընթացք ուներ:

→ էջ 7, 8

ՀԱՅ ՄՄԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ՄՎԵՍՏԻ ՀԱՅՈՒՐԱՄՅԱՆ ՄԱՍԻՆԲԱՐԱՆԸ

→ էջ 3

Գիտական մշակման ենթարկված ֆոնդերը թանգարանը սպասարկում է գիտական հանրությանը, զանգվածային լրատվամիջոցներին եւ ուսանողությանը: Սա արդեն թանգարանի մյուս կարեւոր գործառնությունն է՝ թանգարանային նյութերի հանրահռչակումը, քանզի սպասարկման արդյունքում հրատարակվում, հրապարակվում կամ մասնակիորեն շրջանառության մեջ են դրվում այդ նյութերը:

Թանգարանի ճիճի ու հարուստ ֆոնդերի օգտագործմամբ իրականացվել եւ իրականացվում են հայ գրողների ու արվեստագետների երկերի բազմապիսի հրատարակություններ, գրվել եւ գրվում են գիտական ուսումնասիրություններ, մենագրություններ, ատենախոսություններ, ստեղծվել եւ ստեղծվում են հեռուստատեսային եւ ռադիոհաղորդումներ, վավերագրական տեսաֆիլմեր:

Հենց համապատասխան այս անհատական ֆոնդերի հիման վրա էր Գիտությունների ակադեմիան ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը խորհրդային տարիներին հրատարակել հայ գրականության դասականներ Խ. Աբովյանի, Մ. Նալբանդյանի, Գ. Սումգուկյանի, Զ. Պարոնյանի, Ռ. Պատկանյանի, Զ. Թումանյանի, Պ. Դուրյանի, Մ. Մեծարեցի, Ա. Բակունցի եւ այլոց երկերի բնական բնագրերը: Իսկ արվեստի ինստիտուտը մինչեւ օրս շարունակում է հրատարակել Կոմիտասի ստեղծագործությունների ակադեմիական հատորները: Հոբելյար թանգարանն ինքը նշված տարիներին «Գրական ժառանգություն» մատենաշարով տարբեր հրատարակչությունների միջոցով լույս է ընծայել մի շարք հայ գրողների ու արվեստագետների անտիպ գործեր, հատկապես նամակներ եւ հուշագրություններ:

Հայաստանի անկախության տարիներին թանգարանը ձեռք է բերել նաեւ առանձին հրատարակչության իրավունք. 1995-ից ի վեր տպագրում է հիմնականում իր

ֆոնդային նյութերի հիման վրա կազմված գիտական եւ մասսայական գրականություն: Մինչ այժմ թանգարանի հրատարակչությունը լույս է ընծայել ավելի քան 100 անուն գիրք, որոնցից հիշատակության արժանի են ուշ միջնադարի եւ նոր շրջանի գրողներ Սայաթ-Նովայի, Պաղտասար Դպիրի, Խ. Աբովյանի, Ե. Օտյանի, Գ. Ջոհրայի, Ռ. Մեակի, Վ. Շուշանյանի, Ս. Բյուրատի, Զ. Շեմսի, Մ. Կյուրճյանի, հայագետներ Մ. Աբեղյանի, Զ. Աճառյանի, հայ երաժշտության երախտավորներ Կոմիտասի, Ն. Գալանդեյանի, Գ. Սյունու, Ե. Միրզոյանի եւ այլոց երկերը: Թանգարանը թողարկել է նաեւ գրական ու երաժշտական ստեղծագործություններ ամփոփող խտասալիկներ: Նշված հրատարակությունների մեծագույն մասն իրականացվել է սփյուռքահայ բարերարների ու թանգարանի բարեկամների հովանավորությամբ. այս առումով հիշատակելի է հատկապես հանգուցյալ Հարություն Սիմոնյանի անունը: Նշենք վերջին հրատարակություններից մի քանիսը՝ Կոմիտաս, «Նամակներ» (2007 թ.), Արծվի Բախչիյան, «Սառա Բեռնարը եւ հայերը» (2007 թ.), «Կոմիտաս Վարդապետ. ուսումնասիրություններ եւ յօդուածներ» գիրք Բ (2007 թ.), «Պատասխան 100 տարի անց» (2015 թ.), «Հայ ընտանիք. լուսանկարների ալբոմ» (2015 թ.), Կարո Վարդանյան, «Հատուցման տասներեք դրոշմ» (2014 թ.), Շահան Նաթալի, «Թուրքերը եւ մենք» (2015 թ.), Ակսել Բակունց, «Պատմվածքներ» (2018 թ.), Հովհաննես Թումանյան, «Հոբելյանական ծաղկաբաղ» (2018 թ.), Հովհաննես Թումանյան, «Ուղիղ խոսք. քննադատություն եւ հրապարակա-



Պերճ Պողոսյանի տուն-թանգարանը

խոսություն» (2019 թ.), Եղիշե Զարեհ, «Կոմիտասի հիշատակին» (2019 թ.), Նաիրա Շահվաղյան, «Ազնիվ Հրաչյա» (2020 թ.):

Թանգարանային նյութերի հանրահռչակման կարեւորագույն եղանակներից է ցուցադրությունը: Թանգարանն ունեցել է եւ ունի մշտական ցուցադրություն: Այն կազմակերպված է 5 ցուցասրահներում: Առաջին 2-ում ներկայացված է հայ գրականությունը, 3-րդում՝ թատերարվեստը, 4-րդում՝ կինոարվեստը, 5-րդում՝ երաժշտարվեստը: Ցուցադրված նյութերը անձայն բարբառում են ոչ միայն գրականության եւ արվեստի հարյուրավոր երախտավորների, այլեւ հայ իրականության մեջ նշանակալի հոգեւոր հերկ արած կրթական (դպրոցներ, վարժարաններ, ճեմարաններ), գիտական, մշակութային հաստատությունների, գրական, երաժշտական, թատերական խմբերի,

միությունների, նշանավոր պարբերականների խմբագրությունների մասին: Նյութերի բազմազանությունն աներեւակայելիորեն լայն է՝ գեղարվեստական, գիտական, ազգագրական, մանկավարժական, հուշագրական երկերի ձեռագրեր, նամակներ, փաստաթղթեր, վավերագրեր, մոտաներ, լուսանկարներ, հրավիրատոմսեր, ազդագրեր, նվագարաններ, անձնական եւ բեմական հագուստ, կահույք, սպասք, հուշանվերներ, պետական պարգևներ, շքանշաններ, մեդալներ, զեմբեր, կինոսարքավորումներ, հմատիպ գրքեր, մամուլ եւ այլն:

Գրական ցուցասրահում կարելի է տեսնել Սայաթ-Նովայի Դավթարը, որ, ինչպես վերն արդեն նշել ենք, թանգարանին նվիրել է Հ. Թումանյանը. կա Թումանյանի նամակը, որտեղ նա վկայում է Դավթարը թանգարանին նվիրելու մասին: → էջ 6

ՀԱՅ ԿՐԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ԱՐՎԵՍՏԻ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱՆ ՄԱՍԻՆԵՐԱՆԸ

← էջ 3, 5

Ցուցադրված են Ռաֆֆու անձնական իրերը: Կա մամուլի առանձին ցուցափեղկ. 20-րդ դարասկզբի մամուլի կրպակի տեսքով է ներկայացված հայկական մամուլը՝ եւ Հայաստանում, եւ Սփյուռքում հրատարակված ու հրատարակվող: Սրահի ցուցանմուշներից է Վ. Յուզգոյի մամակը՝ գրված Գ. Սունդուկյանին, մատչելիքին՝ ուսանողական տարիներին արած գծանկարները: Ներկայացված են Չարենցի ձեռագրերը, որոնք փրկել է Ռ. Ղազարյանը. դրանք 17 տարի հողի տակ են մնացել: Հնատիպ գրքերից, որոնց թիվը թանգարանում ավելի քան 500 է, ցուցադրությունում տեղ են գտել ամենահինը (բնականաբար, թանգարանում եղած գրքերից)՝ «Ախթարք»-ը՝ տպագրված 1513 թ., եւ առաջին հայերեն տպագիր Աստվածաշունչը՝ լույս ընծայված 1666 թ. Ոսկան Երեւանցու կողմից: Ներկայացված են հայկական կրթօջախների արխիվներից փաստաթղթեր, լուսանկարներ, մատչելի կրթօջախների սաների դպրոցական պարագաներից: Կա եղեռնամահ գրողների անկյուն, ցուցադրված են խորհրդային վարչակարգին զոհ դարձած գրողների լուսանկարներ, փաստաթղթեր


եւ անձնական իրեր: Առանձին բաժնում գետեղված են Շիրվանզադեի իրերը: Ներկայացված են մաեւ 1960-ական թթ. խորհրդահայ գրողները՝ Կոստան Չարյանից մինչեւ Աղասի Այվազյան: Հայ եւ օտարագի հայագետների անկյունում ցուցադրված են Հր. Աճառյանի, Մ. Աբեղյանի, Հ. Հյուբշմանի, Յու. Վեսելովսկու եւ այլոց ֆոնդերից նմուշներ: Սփյուռքահայ գրողներին հատկացված ցուցափեղկում առանձնանում է Արշակ Չոպանյանին մվիրված հատվածը. սփյուռքահայ գրողների արխիվներից ամենամեծը նրան է (շուրջ 60000 միավոր ցուցանմուշ ֆոնդերում): Ներկայացված են Ֆ. Վերֆելի եւ Պ. Էլյուարի մամակները՝ ուղղված Չոպանյանին, ինչպես մաեւ Է. Չոլայի՝ նրան մակագրած այցեքարտը, Ֆրանսիայի եւ Ռումինիայի կառավարություններից ստացած շքանշանները, մանսեմյան անձնագիրը: Գրական ցուցասրահում են մաեւ Վ. Սարոյանի ինքնադիմանկարը եւ ծննդյան 70-ամյակի առթիվ ստացած հուշանվերը:

Շարունակելի

Հրաչյա ԲԱՆՈՅԱՆ (ԱՐՄԵՆՅԱՆ)
Բանասիրական գիտ. թեկնածու



Վաթսուռնականների արձակագիրներ. ժամանակը եւ հերոսը



← էջ 4

Նա առաջ է քաշում պատկերվող կյանքը միայն իրեն բնորոշ կողմերով ու սկզբունքներով ներկայացնելու խնդիրը: Կյանքը պետք է գեղարվեստական իրականություն դարձնել այն տեսքով, ինչպիսին այն կա եւ ոչ թե վերածնել որեւէ տեսության սկզբունքով եւ ներկայացնել վերափոխված տեսքով. «Իմ Հաջի-Մուրադի դեմ ինձ պետք չեն զա իմ իմացած ոչ էկզիստենցիալիզմը, ոչ բուրդիզմը, ոչ էլ բիրոքրմիսմ: Իմ Հաջի-Մուրադի դեմ ինձ հարկավոր է այն իզմը, որը թաքնված է այդ մյուսի մեջ եւ որը պիտի բացահայտվի մյուսի յուրացման հետ» (նույն տեղում):

Ոչ թե տեսությունը պարտադրել կյանքին, այլ կյանքից, մյուսից բխեցնել այդ տեսությունը՝ ահա նրա սկզբունքային դիրքորոշումը: Կյանքը մերսից, իր հատկանշական շարժումներով, մյուսի ընդգրկվածով ներկայացնելու (այդ, ներկայացնելու եւ ոչ թե կատարվածի մասին պատմելու) մախասիրությունը նրան հանգեցնում է կյանքի տվյալ պատառիկն իր համաժամանակյա բոլոր դեպքերով, զգայություններով, հիշողություններով, անդրադարձումներով, մանրամասներով պատկերելու սկզբունքին: Այս առումով անչափ բնորոշ են նրա հետեյալ խոհերը. «Ինչպե՞ս անեն, որ իմ պարբերության շեշտը կարողանա վերցնել նրա ձիու վարձը, քառատրոփը, սրտի պայթյունը,

թառանչը. ինչպե՞ս անեն, որ բնանկարը փռվի գործողությունների հետ...» (Հ. Մաթեոսյան, Սպիտակ թղթի առջեւ, ԳԹ, 1966, թիվ 42):

Թե՛ այս եւ թե՛ հետագա տարիներին (1973 թվականին «Գրական թերթ»-ում) ծավալված սուր բանավեճը բողոքված կամ բացահայտ ձեւով խոսակցության մյուս էր դարձնում մաեւ մեկ այլ հարց, որ վերաբերում է գյուղագրության ու քաղաքագրությանը: Սա մաեւ անչափ կարեւոր խնդիր է գրական հերոսի տեսակը ճշտելու համար: Սակայն գյուղագրություն, թե՛ քաղաքագրություն հարցադրումն առաջին հերթին կարող է առնչվել միայն մյուսին եւ ոչ թե գեղարվեստական որակին: Արձակի բաժանումը գյուղականի եւ քաղաքայինի եւ դրանց անտեղի հակադրումն այժմ ընդունված են գրականագիտության մեջ. ռուս գրականագետները ոչ մի մկաստացուցիչ կամ դրվատական իմաստ չեն դնում այդպիսի բաժանման մեջ, այլ ուղղակի օգտագործում են՝ մյուսի ուղղվածությունը ճշտելու համար. այնպես, ինչպես օգտագործում են մյուսի պատերազմական, պատմահեղափոխական, արտադրական խմբավորումները: Հայ արձակագիրները եւս իրենց ծրագրային ելույթներում ճիշտ էին դնում հարցը՝ գյուղագրությունը համարելով ոչ թե որակ, այլ հայացք իրականությանը: Անենեւին էլ ճիշտ չէ գրականության

գարգացումը հանգեցնել որեւէ տեսակետի. դա կարող է լինել սոսկ մախասիրություն, բայց ոչ հարցի գիտական եւ ստեղծագործական բացատրություն:

Իրավացի էր Պետրոսյանը, երբ գրում էր. «Տարիներ շարունակ մեր գրական մամուլից եւ ասուլիսներից ես այն տպավորությունն եմ ստացել, որ մորարարության եւ ավանդականի վերաբերյալ խոսակցությունը ըստ էության դառնում է գյուղի եւ քաղաքի մասին գրված երկերի հակադրում: (Փակագծում ասեն, որ ես չեմ ընդունում գրականության մման տեսակավորումը, քանի որ եղել է եւ կա միայն գրականություն եւ ոչ գրականություն: Բայց մեր արձակի փաստական վիճակը առայժմ հիմքեր է տալիս այդ բաժանման համար, քանի որ որոշ գրողներ գրում են առավելապես գյուղական միջավայրի մարդկանց մասին, որոշ գրողներ՝ առավելապես քաղաքի») (Վ. Պետրոսյան, Հավասարում բազմաթիվ անհայտներով, էջ 350): Մաթեոսյանն այդ հարցին պատասխանում է այսպես. «Չկա գյուղագրություն կամ քաղաքագրություն. կա միայն մարդկային հայացք բնության ու աշխարհին» (Հ. Մաթեոսյան, Այսպես կոչված գյուղագրության մասին, ԳԹ, 1968, թիվ 37, 13 սեպտեմբեր): Լայն առումով, ըստ էության, ճիշտ պատասխան, որովհետեւ, ի վերջո, անկախ նրանից, թե ինչի մասին է գրում գրողը՝ 4–5-րդ դարերի պատմության, եղեռնի, այսօրվա գյուղի թե քաղաքի, կարեւորը նրա գրական շնորհքն է, ժամանակակից մտածողությունը, երեւոյթների մեջ խորանալու հմտությունը, որոնք եւ գրական արժեք ստեղծելու հիմնական մախադրյալներն են: Օրինակներ որոնելու համար հեռուն գնալու հարկ չկա. հիշենք միայն Համաստեղին, Ակսել Բակունցին, Հակոբ Մնձուրուն: Այս հարցի վերաբերյալ ճիշտ դիրքորոշում ունեն մաեւ մյուսները, երբ մշում են, որ գյուղի մասին գրել չի մշանակում գրել չգարգացած գյուղացու մակարդակով: «Քաղաքայինը, ըստ իս, արվեստի մակարդակն է ու կուլտուրան եւ ոչ թե թեման կամ օբյեկտը...» (Պ. Չեթունցյան, Սրբւմ, թե հաշտեցում: Չափանիշ, «Գարուն», 1968, թիվ 8, էջ 14),– գրում էր Պերճ Չեթունցյանը: Համանման կարծիքի էր մաեւ Գեւորգ Արշակյանը. «Գյուղի մասին պետք է գրել մեր դարի, մեր վաթսուռական թվականներ

ի մարդկային փոխհարաբերությունների խորքից: Իրականում <...> գյուղի մասին գրվում է «ավանդության» եւ ոչ ժամանակի ճշարտությունը պեղելով: <...> Իմ կարծիքով այսօրվա գյուղի մասին պետք է գրել քաղաքացու մման եւ ոչ թե գյուղացու...» (Գ. Արշակյան, Աշխարհի հետ բանականության, ԳԹ, 1968, թիվ 35): Այս կարծիքների մեջ օգտագործված «քաղաքի չափանիշ», «գրել քաղաքացու մման» արտահայտությունները կիրառվում են որպես գեղարվեստական բարձր մակարդակի բնորոշում եւ ոչ թե որպես քաղաքի հակադրություն գյուղին:

Քաղաք, թե՛ գյուղ հարցադրման մեջ կարեւորը հերոսի ընտրությունն է, հերոսի ներաշխարհի վերադարձման սկզբունքները, պատկերվող մյուսի կարեւորությունը, կյանքի հարստությունը բացահայտելու կարողությունը, գրական տարողունակ կերպարներ ստեղծելու հմտությունը: Եվ բացի դա՝ չպետք է երբեք իրար հակադրել այդ երկու եզրերը, որովհետեւ մեկը մյուսի սկիզբն ու շարունակությունն են: Պետք է ուղղակի կարեւորություն տալ ժամանակակից կյանքի էությունը ճիշտ բացահայտող վիճակների, հարցադրումների եւ հերոսների հայտնաբերմանը:

Երիտասարդ արձակագիրների բանավեճի թունդ պահին լույս տեսած Մահարու «Այրվող այգեստաններ» (1966 թ.) վեպն այս տեսակետից կարող էր շատ օրինակելի լինել: Մուրադխանյան եղբայրների գործունեությամբ մա պատկերում է եւ գյուղը՝ Երմանցը (Մխո-Մխիթար), եւ քաղաքը՝ Վանը (Օհանես աղա, Գեւորգ), եւ մայրաքաղաքը՝ Կոստանդնուպոլիսը (Համբարձում):

Ի տարբերություն գրականության պատմության համար անհիշատակ որոշ գրողների, որոնք սոսկ տեսաբանում էին, օրախնդիր հարցին Մահարին պատասխանեց բարձր գեղարվեստով:

Մեր ժամանակները բարդ, բազմաշերտ վիճակների ու հարաբերությունների մեջ են դնում մարդուն. իհարկե, անմտություն է ասել, թե այդ վիճակներն ստեղծվում են միայն քաղաքում, որ գյուղը հեռու է այդ ամենից. գյուղում տարբեր բեկումներով են այդ վիճակներն ու համապատասխան հոգեբանական հարաբերություններն ու առնչությունները ձեւավորվում: ➔ էջ 8

Սերգեյ Շերվինսկին հայ գրականության թարգմանիչ

Սկիզբը՝ թիվ 9—10, 12—13

Անդրադառնալով վեպի ոճին՝ չենք կարող չխոսել Սերգեյ Շերվինսկու արտահայտած կարծիքի մասին։ Վերջինս իր ««Վերք Յայաստանի» վեպի թարգմանության առիթով արված նշումներ» հոդվածում գրում է. «Արվյանի վեպի ոճի ուսումնասիրությունը թույլ է տալիս ասել, որ զանազան, առաջին հայացքից համադրված գրական միջոցները, որոնք գործածում է Արվյանը, վերցված են ռուս գրականությունից եւ ասես բազմապատկված են հեղինակի տաղանդով» (էջ 214)։ Մենք չենք կարող ասել, թե թարգմանիչը ինչի հիման վրա է հանգել այդ եզրակացության, քանի որ մա իր հոդվածում առաջ է բերում այդ տեսակետը՝ առանց որոշակի հիմնավորումների։ Այնուամենայնիվ, չենք կարող մատ

համաձայնել Շերվինսկու այդ կարծիքին։ Պատճառն այն է, որ Արվյանի ստեղծագործությունը խոսք է ի խորոց արտի, որն արտահայտում է հայ ժողովրդի վիշտն ու ուրախությունը եւ առանց հիմնավոր փաստարկների սխալ կլինի ասել, որ Արվյանի կիրառած ոճային համադրությունը փոխառված է ռուս գրականությունից։ Առավել ճիշտ կլինի նշել, որ ռուս գրականությունը, որը հարազատ էր Արվյանին, նրա համար ոչ թե կրկնօրինակման առարկա է, այլ ստեղծագործական խթանիչ նյութ։ Նշենք մաեւ, որ թարգմանչի համար կարեւոր էր ընկալել վեպի գաղափարախոսությունը։ Սերգեյ Շերվինսկին խոստովանել է, որ մինչ վեպի թարգմանությանն անցնելը՝ ինքն ուսումնասիրել է Արվյանի մտածողության ձեւը եւ անգամ վերջինիս աշխարհայացքի վրա ազդեցություն ունեցած գործոնները, որոնց թվում մա կրկին

ընդգծում է ռուս գրականության ազդեցությունը։

Մեկ այլ խնդիր էր մաեւ վեպի լեզուն, որը ներառում է ինչպես գրաբար, այնպես էլ մի շարք բարբառային բառեր։ Ճիշտ է՝ թարգմանելիս Շերվինսկին օգտվում էր տողացի թարգմանությունից, սակայն հարկ էր համարել ուսումնասիրել մաեւ վեպի կազմում եղած շատ ու շատ բառերի ստուգաբանությունը եւ վեպի թարգմանական տարբերակում դրանք ոչ թե թարգմանել, այլ տառադարձել է՝ տողատակում նշելով ծանոթագրությունը։ Պետք է ասել, որ այդ ծանոթագրությունները ոչ միայն ամբողջացնում են վեպի թարգմանությունը, այլեւ մեծ հետաքրքրություն են ներկայացնում ինչպես ռուս, այնպես էլ հայ ընթերցողի համար։ Օրինակ՝ բնագրում Արվյանը գրում է. «Լավ գիտեի, որ թե Օսմանցվի թե Ղալբաշի երկրումը՝ ինչքան էնպես երեւելի, խելք, հունարով մարդ են էլել, ինչքան խանի, շահի, սուլթանի դռներին սիրեկան աշըղ, լավ խաղ ասող, ոտամավոր շինող մարդ են էլել, շատը Յայ ա էլել» (հ. Արվյան, Վերք Յայաստանի, Երեւան, 1959, էջ 3)։ Շերվինսկին այս հատվածը թարգմանել է հետեւյալ կերպ. «Я знал твердо: в османской земле, а также в персидской, сколько было замечательных, мудрых, одаренных людей, сколько при ханских, шахских, султанских дворах любителей-ашугов, хороших певцов, стихотворцев,— они большею частью были армяне» (X. Абовян, Рань Армени, Ереван, 1948, էջ 36)։ Տվյալ դեպքում Շերվինսկին անթարգման է թողնում «աշըղ» բառը՝ այն տառադարձելով որպես «ашуг»։ Այնուամենայնիվ, պարզ է, որ միայն հեղինակի մտածելակերպի եւ բնագրի բառապաշարի ուսումնասիրությունը չէր կարող լինել հաջողված թարգմանության մախապայման,



եւ հատկանշական են մաեւ, այդպես կոչված, «ֆոնային» գիտելիքները։ Թարգմանիչը պետք է ծանոթ լինի այն իրականությանը, որը պատկերված է բնագրում։ Այդ կարգի գիտելիքները թարգմանության տեսության մեջ կոչվում են «ֆոնային»։ «Ֆոնային» գիտելիքներն անհրաժեշտ են բնագիրը ճիշտ հասկանալու եւ հարազատորեն վերստեղծելու համար։ Այս ամենը հիմնավորելով՝ նշենք, որ

Շերվինսկին բազմիցս այցելել էր Յայաստան եւ ուսումնասիրել հայ ժողովրդի կենցաղը, ինչը եւս մեծ դեր խաղաց վեպի թարգմանության հարցում։

Ինչպես արդեն նշվել է, վեպի թարգմանությունը պետք է կատարվեր տողացի թարգմանության միջոցով, քանի որ Շերվինսկին չէր տիրապետում հայոց լեզվին։


→ էջ 8

Զարեհ Որբունու պատմվածքները

← էջ 5

Պատմվածքներում պատկերված է Փարիզ ընկած երիտասարդների ողբերգական կյանքի պատմությունը։ Գրողը միտումնավոր կերպով վեպի հերոսներ է դարձրել տարբեր կարգավիճակում ու տարիքում գտնվողներին. նրանք հեշտությամբ կարող են մոր բարքերի զոհը դառնալ, մոր կյանքի հրապույրները, հետաքրքրությունները, «ազատ» կյանքը հիմնովին կարող են փոխել նրանց կյանքի ընթացքը, շեղել ազգային ավանդներից։ Ի տարբերություն Շահնուրի, որն իր վեպը գրելիս դիմել է բազմապլոտային կառույցին՝ գրական հմտությամբ տալով սփյուռքահայ կյանքի ժամանակակից պատկերները, հասարակական եւ ազգային երեւույթների նկատմամբ իր հստակ մոտեցումները, Որբունին սյուժեի միաձավալ զարգացում է ընտրել։ Շահնուրի վեպի սյուժեն կարծես վեց տարբեր ծյուղավորում ունի՝ Պետրոսի (Պիեր), Սուրենի, Յրաչի, Լոխունի, Լեսքյուռի եւ Նենեթի (մադամ Ժան) ընտանեկան, ընկերային միջավայրերը՝ իրենց թե՛ ներքին, թե՛ արտաքին կյանքով, վեց տարբեր մարդիկ՝ առանձնահատուկ ընթերցման երկր, բարոյական վարքագծով։ Սյուժեի բազմաձալ բնույթը բխում է կյանքն ամբողջական կտրվածքով արտացոլելու ձգտումից, մինչդեռ Որբունու պատմվածքներում առանձնանում են կյանքի մի դրվագ կամ իրողություն, կերպարների թիվը եւս մեծ չէ՝ պատմվածքի ժամրով պայմանավորված։

«Աղուոր մարդը» պատմվածքի հերոսը եւս գաղթական հայն է, որն ապրում է Փարիզում, գրող, մտավորական, որին հուզում է իր ժողովրդի վիճակը։ Փարիզը լիքն էր գաղթականներով, մուրացիկներով, որոնք չէին կարողանում անգամ օրվա մի կտոր



հացը վաստակել։ Թագավորն ամեն օր խաշած հավ էր ուտում, ազնվազարն ձիով շրջում, իսկ մարդիկ սոված էին մնում։ Փողոցում խորոված գետնախնձորներ վաճառող տղային շատ էր խղճում, բայց որեւէ բանով օգնել չէր կարող։ Գրքերը չէին վաճառվում։

Իր տանը հանդիպում է Խաչիկ Աթանեսյանին։ Նրան կապոցով գիրք է տալիս եւ վիրավորվում, երբ Խաչիկը գումար է դնում սեղանին։ Մտավորականի հպարտությունը խեղդում է նրան։ Այդ օրվանից մի տող անգամ գրել չի կարողանում։ Շարունակ քայլում է փողոցներով, բայց հոգեվիճակը չի փոխվում, ճնշվածությունը չի անցնում։ «Բայց տրամադրությունն թունաւորած էր։ Չէի կրնար շիտկել շիտակ վայելել ազատութիւնս, եւս, որ այնքան կը սիրեմ փողոցները

որ թափառի, կռահել ամեն մեկուն մեջ կուշ եկած երազը, ամեն մեկուն վեպը, կարծես մարդիկ ապակի ըլլային... Այդ օրը կորսնցուցած էի հարստութիւնս, աւելին՝ եղել էի չափազանց աղքատ, բոկոտն, որ չէր կրնար հաղորդուիլ անցորդներուն» (2. Որբունի, Անձրետտ օրեր, էջ 73)։

Եթե հայրենիքում լինէր, բնականաբար, իրեն ուրիշ ճակատագիր կվիճակվեր, իսկ Փարիզում հայը դատապարտված էր ոչ միայն կեղեքիչ կարոտին, այլեւ ապրուստի միջոցներ հայթայթել չէր կարողանում. «Գաղթականն մարդ կ'ըլլայ։ Ոչ, չըլլար։ Չըլլար մանավանդ երբ գաղթականութիւնը անցողական կացութիւն մը նկատելով կը մտնես սպասման վիճակի մեջ, որ հանգրուան չունի, ինչպէս Յայուն սպասումը եւ կը մնաս հոգիով մանուկ, տարիքը առած մարմնով» (Ույն տեղում, էջ 69)։

Ի տարբերություն գրողի՝ Խաչիկը գտել էր իրեն հարմար աշխատանք։ Սկզբում Ռընոյի գործարանում է աշխատել, հետո՝ դրամատանը։ Գրողի մամները օտար երկրում չեն գտնում իրենց տեղը, նրանց թշվառ վիճակը չի փոխվում։ Երանի՛ հայրենիքում լինէր, այնտեղ իր ճակատագիրն ուրիշ կլինէր. «Եթէ անշուշտ ժամանակը կորուստէ փրկէ միեւնոյն ժամանակ սա հայրողիները, որոնց պատմութիւնը ի հարկէ ուրիշ պիտի ըլլար, եթէ անոնք գտնուէին հարազատ երկրին մեջ, ուր արդեն անոնց կեանքը ուներ իր գծուած ճաքբան» (2. Որբունի, Անձրետտ օրեր, էջ 79)։

Զարեհ Որբունին մեկն էր «Փարիզի տղաք»-ից, որի համար Սփյուռքում ապրելն ու վերապրելը հնարավոր ու կարելի էր միայն գրելով, այն իմաստով, որ Որբունու համար ահավոր այդ իրականության, ներքին սփռումի, դիմադարձումի միակ կերպը այդ ամբողջ պատմելն էր պարզապէս՝ վեպով, պատմվածքով, օրագրությամբ, նամակներով, առանց սահմանավորելու, առանց տեսակավորելու։ Գրողի հերոսները

հիմնականում հայրենիքից հեռու գտնվող մարդիկ են։ Միջավայրը պայմանավորում էր հերոսների առանձնահատկությունները, հայրենիքից հեռու ապրելու դժվարությունները։ Գրողի մտահոգող հարցն այս դեպքում, իր իսկ ձեւակերպմամբ, «լիմելութեան հարցն» էր, մնալու ու լինելու, ներկայություն դառնալու հարցը։

«Գոհարիկ» պատմվածքի հերոսը հայրենիքից հեռու ապրող մարդն է։ Ուշագրավ է պատմվածքի սյուժեն, որը զարգանում է հերոսի խորհրդածությունների ու տառապագին ապրումների շղթայով։

Հերոսը կորցրել է իր քուն ու դադարը, միտքը մթագնել է, անգամ անկարող էր գտնել օրվա ժամանակային բաժանումները։ Սովորության համաձայն՝ ցերեկն անցկացնում էր դպրոցի գրասենյակների առջեւ, իսկ գիշերը՝ մայրաքաղաքի անհամար փողոցներում։ Ուղեղը աքսորական Լիր արքայի մման կախված էր դիպվածներից ու հանգամանքներից։ «Եթէ զգալու ընդունակութիւնը տակաւին գիս չէր լքած ամբողջութեամբ, յամենայն դէպս տեսողական, լսողական, հոտառական կամ քմքային երեւոյթները բացարձակապէս շոշափական երեւոյթի վերածուելով՝ ինծի կուտային մարմնական տպաւորութիւններ» (2. Որբունի, Պատմութեան օրեր, Երեւան, 1966, էջ 9)։

Ուղեղային թմբիրը, ցրտին ու սառնամանիքին զուգահեռ, ավելի ծանր վիճակի մեջ էին դրել հերոսուհուն։ Այդ տառապանքները մոր չէին. գալիս էին մանկությունից, մշտապես պայմանավորված էին արտաքին աշխարհով ու հանգամանքներով։ Իրականությունն էր տառապանքի աղբյուրը։ Կյանքի բազմաթիվ օրեր անցկացրել էր «հիսթերիք» ու վավաշոտ կանանց ընկերակցությամբ՝ նրանց հետ կիսելով ծյունաճերմակ անկողնու զովությունը։ Բայց այդ կանանց շնորհիվ զգացել էր մաեւ եթերային արշալույսների գեղեցկությունը, ապրել ամեն օրվա ծնունդն ու վախճանը։

→ էջ 8

Վաթառնականների արձակագիրներ. ժամանակը եւ հերոսը

← էջ 4, 6

Բոլոր դեպքերում մեր ժամանակների խճճված հանգույցները գտնվում են ոչ այնքան գյուղական կամ քաղաքային իրականության երկրորդ շարքի ներկայացուցիչների մեջ, որքան այսօրվա կյանքի առավել խոր, առավել սուր ու արդիական զգացողություն ունեցող հերոսների: Ուրեմն, հարցը ոչ թե գյուղը կամ քաղաքն է, այլ հերոսը, որով եւ բացահայտվում է կյանքի էությունը: Այս առիթով անհնարին է չվերհիշել Պարոյր Սեւակի «Հանուն եւ ընդդէմ «ռեալիզմի մախաիմներ»-ի» հոդվածի ճիշտ դիտողություններից մեկը. «Վաղուց է եկել ժամանակը մտածող-մտավորական-իմացականությամբ լեցուն հերոսի՝ լինի դա քնարական հերոս, թե հերոս վեպ ու վիպակի» (Պ. Սեւակ, ԵԺ, V, 1974, էջ 260):

Հարցի խորքային բուն էությունը սա է, քանի որ այդ «մտածող-մտավորական-իմացականությամբ լեցուն» հերոսն ավելի տարողունակ ու խոր հայացքով է նայում 20-րդ դարի կյանքի իր ժամանակին, քան այլ կարգի հերոսները: Անկախ նյու-

թից, որովհետեւ լավ գրողի համար կարեւոր ու անկարելի, գլխավոր ու երկրորդական նյութ լինել չի կարող, հիմնական խնդիրն այն է, որ եւ գրողը, եւ նրա հերոսներն իրենց մեջ կրեն դարի զարգացման աստիճանը: Եվ առաջին հերթին գրողը պետք է կրի իր մեջ այդ որակները, որովհետեւ, ըստ էության, ինքն է իր գլխավոր հերոսը, իր աշխարհաճանաչողությունն է իր խոսքի հիմնական նյութը: Բացի դա՝ նրա հերոսները միանման լինել չեն կարող, իսկ գրողը պարտավոր է նրանց կյանքն ու ներաշխարհը բացահայտել ժամանակի բարձրակետից:

Այս «մտածող-մտավորական-իմացականությամբ լեցուն» հերոսը գրականության դռները լայնորեն բացեց մտավորականի առջեւ, որը շատ դեպքերում կամ արտածվում է հեղինակից, կամ ծովվում է հեղինակային «ես»-ի:

Շարունակելի

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Զարեհ Որբունու պարմվածքները



← էջ 5, 7

Միօրինակ կյանքը հոգնեցրել էր նրան, ահա թե ինչու որոշել էր փոխել կյանքի ընթացքը: Հոմանունիների էթանագիմ ժպիտներն այլեւս խանդավառություն չէ-

ին պարզեւում: Երեկոներն անցկացնում էր սրճարաններում ու բարերում՝ փորձելով տառապանքը խեղդել ոգելից խմիչքի մեջ: Մարմինը վերածվել էր «քիմիական աշխատանոցի»: «Ժպիտը շատուց հեռացեր էր շրթունքներից, որոնք կնոջական ամենաթարմ միսերում բուրմունքը ծծեր էին, ու կիներն էին դարձել իրենց հետ տարեր՝ այնքան սառնուած, այնքան թանկարժեք ժպիտ» (Զ. Որբունու, Պատմութեան, էջ 11):

Խռովահույզ օրերի շղթան հանկարծ մի օր կանգ է առնում, երբ հայացք է նետում գրասեղանին դրված անընթեռնելի թղթերի կույտին: Մարմնի աշխատանոցային ըմբռնումը կասկածի տակ է դնում անգամ կենդանական գոյությունը, քանի որ կորցրել էր մարդու արժանապատվությունը՝ հավասարվելով անասունի մակարդակին: Բայց հանկարծ գրասեղանի վրա նշմարում է «Երեւանը», վերցնելով գրիչը՝ ծնունդ է տալիս նոր ստեղծագործությունների:

Շարունակելի

Մերի ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու

Սերգեյ Շերվինսկին հայ գրականության թարգմանիչ

← էջ 7

Տողացի թարգմանությունը կատարել էր Մամիկոն Գեորգյանը, որն օգնում էր Շերվինսկուն նաեւ թարգմանության ընթացքում: Ըստ այդմ՝ թարգմանական աշխատանքն ըթանում էր երեք փուլով: Նախ ուսումնասիրվում էր տվյալ հատվածի իմաստը, ապա տեքստը մշակվում էր եմթարկվում, եւ ի վերջո ուղղումներ էին արվում արդեն թարգմանական տարբերակում: Չնայած մի շարք դժվարությունների՝ վեպի թարգմանությունն ընթացավ մեկ շնչով եւ իր ավարտին հասավ արդեն երկու ամիս անց: Սակայն պետք է մշել, որ Շերվինսկու աշխատանքը ոչ թե բառացի թարգմանությունն էր մշակում էր, այլ իրենից ներկայացնում էր նոր մի տեքստի ստեղծում, որն իր գաղափարախոսությամբ չպետք է զիջեր բնագրին: Այդ առումով «Վերք Հայաստանի» վեպի թարգմանությունը լավ օրինակ է այն բանի, որ բառացի թարգմանությունից օգտվելով՝ կարելի է հասնել դրական արդյունքի: Շերվինսկին ասես իրոք գրել է ինքնուրույն մի ստեղծագործություն եւ ռուսաց լեզվի միջոցներով փորձել է ներկայացնել այն աշխարհը, ուր ժողովրդի տառապանքը միախառնվում է երկրի գեղեցկությանը: Ինչպես մշում էր Հովհաննես Թումանյանը. «Թարգմանչի հիմնական խնդիրը բնագրի հարազատ բույրն ու հրապույրը այլ լեզվի միջոցով հարազատորեն հաղորդելն է: Բայցեւ ինչքան շնորհք է հարկավոր, որ ոչ միայն հարազատ ձեւը ցույց տա, այլեւ ինքնուրույն բուրմունք հաղորդի: Եվ շնորհքի հետ ինչքան սեր...» (Հովհ.Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու 10 հատորով, VI, Երեւան, 1994, էջ 152):

Այս առումով առանձնանում է հատկապես Բարեկենդանի օրվա նկարագրությունը: Տվյալ հատվածի թարգմանական տարբերակին անդրադառնալուց առաջ, սակայն, ներկայացնենք բնագրային հատվածը. «Բարեկենդան էր: Չինն էլել՝ դիզվել, սար ու ձոր բռնել էր: Պարզկա գիշերը էնպես էր գետինը սառցոքել, որ ամեն մեկ ոտքը կոխելիս՝ հազար տեղից տաքտաքում, ճռճում, ճքճքում էր, ու մարդի ջանը սոսռացնում, ձեն տալիս: Ամեն մեկ ծառի ճղկներից, ամեն մեկ տամբաշից՝ հազար տեսակ սառցի լուլա, հազար տեսակ ձեւի քուլա՝ կախ էր էլել ու բիզբիզ իրար վրա սառել: Հենց գիտես՝



Գործ՝ Մ. Սարյանի

սար ու ձոր կամ նոր էր ծաղկել, կամ նոր ծերացել, մահվան դուռն ընկել՝ շունչն էր մնացել, որ տա, ու աշխարհիս բարով մնա ասի: Դուռ, գազան, անասուն, տղուն՝ որը փետացել էստեղ-էստեղ վեր էր ընկել, որն էլ վաղուց, ամսով առաջ բուռն մտել՝ ձենը կտրել, պաշարը վայելում, գարնան գայլուն սպասում: Գետերի, առվների երեսները սառիցը մեկ գազ էլել, հաստացել, իրար վրա դիզվել էնպես էր ջրի, աղբի բերնին հուպ տվել, որ մոտերից կանգնողը միմիայն նրանց խուլ ձենն էր լսում, որ սառցի տակին տխուր, տրտում, քլքլում էր ու էլ ետ էստեղ-էստեղ կամաց-կամաց ձենը կտրում, պապանձվում, սառչում» (Խ. Սերվյան, Մույն տեղում, էջ 9): Արվածքը ներկայացնում է ցրտաշունչ բնությունը, որը չնայած իր գեղեցկությանը՝ ասես կիսում է ժողովրդի վիշտը: Շերվինսկուն հաջողվել է վերստեղծել չքնաղ բնության նկարագիրը. «Была масленица. В тот год навалило много снега, он лежал и на горах и в ущельях. Ясная морозная ночь так ско-

на тысячу ладов трещала, скрипела, хрустела, звенела, издавала тысячу всяких звуков. Дрожь пронимала до костей. С веток каждого дерева, с крыши каждого дома свисали тысячи разнообразных ледяных сосулек, тысячи нагромодившихся друг на друга обледеленых снежных комьев.

Казалось, горы и ущелья только что зацвели или же едва успели отцвести: стоят на пороге смерти и осталось им лишь испустить дух и сказать миру свое последнее «прости». Птицы, дикие звери, животные, гады,— иные окоченели и попадали тут и там, а другие заблаговременно, за месяц вперед забились в свои норы и там притаились, поедая потихоньку свои запасы в ожидании возврата весны. Реки, ручьи задержались ледяным покровом толщиной в добрый гяз, наросшим постепенно, пласт на пласт, и так сковавшим уста текучих вод и ключей, что, лишь стоя возле них, можно было расслышать глухой их голос,— он журчал грустно, уныло, то вдруг умолкал понемногу, немел, застывал» (Л. Мкртчян, О стихах и переводах, Ереван, 1965, էջ 127—128): Շերվինսկին գրում է. «Արվածքը չի խնայում իրեն եւ չի խնայում նաեւ ընթերցողին եւ անգամ ընդհանրապէս՝ ցանկանում է, որ յուրաքանչյուր ընթերցողի սրտում մի արնոտ վերք բացվի: Միեւնույն ժամանակ զարմացնում է, թե՛ որքան հումանիզմ է առկա այդ ստեղծագործության մեջ: Թվում է, որ վեպը պետք է միմիայն վրեժ ծնի, սակայն իրականում այն հայրենասիրության եւ լավատեսության մարմնավորում է» (Ճիշտ է՝ դժվար է մշմարել հումանիզմը ծերունիների արցունքների եւ երեխաների ճիչերի մեջ, սակայն այն առկա է վեպի ամեն մի էջում: Այդ առումով առավել ուշագրավ են այն էջերը, որոնք նկարագրում են ռուս զորքերի մուտքը Երեւան, եւ Շերվինսկին էլ, իր հերթին, մեծ ոգեւորությամբ է թարգմանել իր ժողովրդի մասին պատ-

մող հատվածը. «Солдаты стали входить в крепость,— а в тысяче мест, в тысяче окон люди не в силах были рот от-крыть,— так душили их слезы... Как друг, как небесный ангел-благовестник, с венцом свободы и милосердия, вступил князь Паскевич в сардарский дворец. Проходя, в тысяче мест, должен был он сам сдерживать слезы, видя, как старики, дети, девушки, старухи не только у него ноги целуют, но бросаются на шею солдатам и замирают у них на груди в душевном умилении» (Л. Мкртчян, О стихах и переводах, Ереван, 1965, էջ 127—128):

Այնուամենայնիվ, վեպը ողբերգական ավարտ ունի, եւ հայ ժողովրդի հերոս Աղասին ի վերջո հերոսաբար զոհվում է, ինչն էլ ավելի է կրկնապատկում Հայաստանի վերքերը: Սակայն պետք չէ կարծել, որ հայ ժողովրդը միմիայն ողբերգություն է տեսել պետք է մշել, որ Հայաստանի պատմության մեջ քիչ չեն նաեւ հերոսական էջերը, որոնք դարեր շարունակ ոգեշնչել են ոչ միայն մեր ժողովրդի զավակներին, այլեւ օտարերկրացիներին, ինչպես օրինակ՝ Սերգեյ Շերվինսկուն, որն ինքնամոռաց սիրահարված էր հայ գրականությանը:

Սամվել ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՔԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝

«Քրիստոնյա Հայաստան»

թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝

Ասողիկ Ստամբուլյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հեռախոս՝ (010) 517 280

Էլ. փոստ՝ gristhay@etchmiadzin.am

astghikstam@gmail.com

web կայք՝

krishayas.wordpress.com

Ստոր. տպագր. 30.07.2021 թ.

Տպագրանակը՝ 1225